


# Ինչպես չի կարելի ուսումնասիրել ռազմական պատմությունը (Ալեքսան Հակոբյանի «Կրկին Արտազ գավառում Ավարայրի դաշտի տեղորոշման խնդրի մասին» հոդվածի առթիվ)

Ալվազյան Արմեն Մ.

ս. գ. թ., ք. գ. դ. (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0003-2724-7695>

[armenayvazyan@gmail.com](mailto:armenayvazyan@gmail.com)

ՀՏԳ՝ 94 (479.25, 55); EDN: MAKMPI

DOI: 10.58587/18292437-2026.1-72

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** Ավարայրի մարտադաշտի տեղորոշում, պարսկական բանակի երթուղի, ռազմական պատմագիտության մեթոդաբանություն, աղբյուրների հետ աշխատանքի սկզբունքներ, գիտական էթիկա, պատմագիտական քննադատություն, Ալեքսան Հակոբյան, Արմեն Ալվազյան

## Как нельзя изучать военную историю (*по поводу статьи Алексана Акопяна «Снова о вопросе локализации Аварайрского поля в Артазской области»*)

Айвазян Армен М.

к.и.н., д.п.н. (Ереван, РА)

**Аннотация.** В настоящей статье показано, что локализация поля Аварайрской битвы и реконструкция маршрута персидской армии, предложенные в статье Алексана Акопяна (далее – «Акопян, 2017»), являются принципиально ошибочными. Несмотря на формальное наличие научного аппарата, автор систематически отстает от базовых методологических принципов исторического и военно-исторического исследования, включая корректную работу с источниками, учёт предшествующей научной литературы и соблюдение норм научной этики. В частности, автор не владеет необходимыми методологическими инструментами для изучения военной истории, к числу которых относятся военная мысль и военная теория рассматриваемой эпохи, умение работать с картами местности, разбор возможностей развертывания войск, оценка условий организации передвижения войск по имеющимся путям, знание функций и назначения полевых лагерей, роли и значения военной разведки в ходе военных действий, а также корректное применение военной и военно-исторической терминологии.

По крайней мере с конца XIX века историография требует обязательного и явного указания на те работы, в которых те или иные гипотезы и выводы были впервые выдвинуты и обоснованы. Многократные нарушения этого принципа в «Акопян, 2017» едва ли можно считать случайными; скорее они свидетельствуют о попытке нивелировать и частично присвоить существенные результаты исследования, впервые изложенные в книге Армена Айвазяна «Армяно-персидская война 449–451 гг.: Кампании и сражения» (Ереван, 2016). На основе дополнительного анализа в настоящей работе подтверждается и получает дальнейшее обоснование ряд основных выводов указанной монографии, в том числе отождествление поля Аварайрской битвы с Каразиадином в провинции Западный Азербайджан (Иран).

**Ключевые слова и словосочетания:** локализация поля Аварайрской битвы, маршрут движения персидской армии, методология военно-исторических исследований, принципы работы с источниками, научная этика, историографическая критика, Алексан Акопян, Армен Айвазян

## How Not to Study Military History (*On Aleksan Hakobyan's Article "Once Again on the Problem of Identifying the Location of the Avarayr Battlefield in the District of Artaz"*)

Ayvazyan Armen M.

Doctor of Political and Historical Sciences (Yerevan, RA)

**Abstract.** This article shows that the localization of the Avarayr battlefield and the reconstruction of the Persian army's route proposed in Aleksan Hakobyan's article (hereafter "Hakobyan, 2017") are fundamentally erroneous. Despite the formal appearance of scholarly apparatus, the author systematically departs from the basic methodological principles of historical and military-historical research, including proper engagement with sources, prior scholarship, and established standards of academic ethics.

In particular, the author lacks command of essential methodological tools for the study of military history, including the military thought and theory of the period, competent use of terrain maps, the consideration of the possibilities for the deployment of forces as well as the conditions for organizing marches along available routes, knowledge of the functions and purposes of field camps, the role and importance of military intelligence during military operations, and the proper use of military and military-historical terminology.

Since at least the late nineteenth century, historiography has required explicit attribution to works in which hypotheses and conclusions were first advanced and substantiated. The repeated violations of this principle in "Hakobyan, 2017"

can scarcely be regarded as accidental and instead suggest an attempt to obscure and partially appropriate the extensive findings presented in Armen Ayvazyan's book *The Armenian-Persian War of 449–451: Campaigns and Battles* (Yerevan, 2016). Based on additional research, this study reaffirms and further substantiates several principal conclusions of that earlier monograph, notably the identification of the Avarayr battlefield with Qaraziadin in Iran's West Azerbaijan Province.

**Keywords & phrases:** localization of the Avarayr battlefield, route of the Persian army, military-historical methodology, principles of source analysis, academic ethics, historical critique, Aleksan Hakobyan, Armen Ayvazyan

### **Խնդրի էությունն ու ուսումնասիրվածությունը**

2017 թ. սեպտեմբերին հրատարակվել է պատ. գիտ. դոկտոր Ալեքսան Հակոբյանի (այսուհետև՝ Ա.Հ.) «Կրկին Արտազ գավառում Ավարայրի դաշտի տեղորոշման խնդրի մասին» հոդվածը (այսուհետև՝ «Հակոբյան, 2017» [9]), որում առաջադրվում է Ավարայրի դաշտի տեղորոշման սխալ և շինծու մի վարկած: Թեպետ հոդվածի գիտական մակարդակն ու արժեքը չափազանց ցածր են, այնուամենայնիվ՝ ակադեմիական պարբերականում դրա հրատարակումը, ինչպես նաև հեղինակի բարձր գիտական աստիճանը պահանջում են պատասխանատու քննադատական արձագանք:

Նախ հիշեցնենք, որ 2016 թ. հունվարին լույս է տեսել տողերիս հեղինակի ռուսերեն ծավալուն մենագրությունը՝ «449–451 թթ. հայ-պարսկական պատերազմ. ռազմավույերն ու ճակատամարտերը» (այսուհետև՝ «Айвазян, 2016» [12]), որը առաջին անգամ համակողմանիորեն քննում է այդ մեծ պատերազմի ռազմական պատմությունը: Մենագրության մեջ, մասնավորապես, բացահայտվել և ճշտվել են մարտական գործողությունների շարժընթացն ու ժամանակագրությունը, հայկական և պարսկական բանակների թվաքանակը, նրանց կազմակերպական կառուցվածքներն ու ռազմական հայեցակարգերը, ինչպես նաև պատերազմ և մարտեր վարելու գործնական եղանակները: Հանգամանորեն վերլուծության են ենթարկվել Խաղիսաղի (450 թ.) և Ավարայրի (451 թ.) ճակատամարտերը, ներառյալ՝ հակառակորդների մարտավարական պատրաստությունները, մարտակարգերը, զորատեսակների քանակն ու առաջադրանքները, դրանց ճակատում ու խորքում տեղաբաշխումը, մարտերի ընթացքը: Սահմանվել է պատերազմի պատմության պարբերացումը: Վերծանվել են գրաբարյան ռազմական բառապաշարի և եզրութաբանության բազմաթիվ միավորների բուն իմաստները: Պատմառազմագիտական տեսության և աղբյուրագիտական հարուստ նյութի մանրագին համադրման ծիրում քննության են ենթարկվել Հին Հայաստանի ռազմական պատմության մի շարք զուգահեռ հիմնախնդիրներ, այդ թվում՝ հայոց բանակի բարեփոխումները, առանձին զորամիավորումների ծագման, հրամանատարության ու հետագա պատմության հետ կապված հարցերը (մարդպետական գորք, ոստանիկներ, սպասավորներ, սահմանապահ-

ներ, գրահակիր ձիավորներ կամ կատաֆրակներ և այլ): Բոլոր հարցերը հետազոտվել են միջառարկայական մեթոդաբանությամբ՝ աղբյուրագիտական, ռազմապատմական, ռազմատեսական, ռազմագրությամբանական, ստուգաբանական, պատմաբանասիրական, պատմաժողովրդագրական, տեղագրական ու ժամանակագրական վերլուծության տարբեր մակարդակների ինտեգրման հիման վրա:

Մենագրությունն արդեն իսկ գրախոսվել և բնութագրվել է որպես «հիմնարար» [14, էջ 240; 16, էջ 153; 17, էջ 191]: «Հիմնարար» է այն անվանվել նաև Ա.Հ.-ի նշված հոդվածում [9, էջ 107], որտեղ, բացի այդ, մի հերթական ծանոթագրության մեջ ներառված է նաև հետևյալ գնահատականը. «Հարկ է նշել, որ վերջին մենագրությունը հանգամանալից պատասխան է տալիս ծագող գրեթե բոլոր մեծ ու փոքր հարցերին եւ դրանով ուրիշ հետազոտողի համար ստեղծում ոչ մի կարելուր իրողություն բաց թողած չլինելու վստահութեան մեծարժեք պատեհություն» [9, էջ 120 (ծնթ. 7)]: Իհարկե, այս պաճուճաբանված խոստովանությունը պետք էր անել ոչ թե հոդվածի վերջում՝ ծանոթագրության տեսքով, այլ հենց սկզբում՝ հիմնական շարադրանքի մեջ, որտեղ այն կլիներ և՛ ավելի անկեղծ, և՛ ավելի տեղին:

Ինչևիցե, գրքիս բովանդակության համառոտագրումից իսկ ակնհայտ է դառնում, որ նրանում արժարժված պատմառազմագիտական բազմաբնույթ հարցերը խիստ փոխկապակցված են, ուստի դրանց քննությունն ու լուսաբանումը հնարավոր էր իրականացնել իրարահաջորդաբար՝ փոխադարձորեն ստուգվելու և հաստատվելու միջոցով: Օրինակ, Ավարայրի ճակատամարտի հավաստի տեղորոշումը պահանջում է քննախուզորեն ճշտել հայկական և պարսկական բանակների թվաքանակը, մարտակարգերը (այդ թվում՝ առանձին զորատեսակների ու զորամիավորումների քանակն ու տեղաբաշխումը), հայ և պարսիկ հրամանատարությունների ռազմական հայեցակարգերն ու մարտավարական մտահղացումները, տեղագրական և ժամանակագրական խնդիրները, ինչպես նաև վերծանել ու մեկնաբանել սկզբնաղբյուրներում պահպանված յուրաքանչյուր բառը, ռազմական եզրույթն ու բառակապակցությունը:

Այդ մեծածավալ աշխատանքի հիման վրա վստահորեն տեղորոշել ենք Ավարայրի դաշտը, որտեղ 451 թ. մայիսի 26-ին տեղի ունեցավ

հայոց և պարսից բանակների գլխավոր ճակատամարտը: Այն գտնվում է այժմյան Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում՝ Կարազիադին անվամբ հայտնի դաշտում, Ուրմիա լճի ափից մոտ 70 կմ հարավ և Վանա լճի հյուսիս-արևելյան ծայրից մոտ 120 կմ արևելք<sup>1</sup>: Այս տեղորոշումը հիմնավորել էր Հ. Աղաբեկյանը՝ իր 1967 թ. հրատարակված ուշագրավ հոդվածում, որտեղ, համեմատելով Ավարայրի դաշտի վայրի վերաբերյալ գոյություն ունեցող յոթ տարբեր վարկածները, նա եկել էր համոզիչ եզրակացության [11, էջեր 91-114]<sup>2</sup>: Հարցը ճշտելու համար հետազոտողը իրավամբ որոշիչ էր համարել երեք հիմնական հանգամանք.

ա) Հեր և Չարևանդ գավառներում պետք է գտնվեր այնքան ընդարձակ դաշտ, որտեղ կարողանային տեղավորվել և բացազատվել հայկական ու պարսկական մեծաքանակ բանակները, որոնց հեծյալ և հետևակ ուժերի ընդհանուր թիվը հասնում էր առնվազն 170–200 հազարի (եթե ոչ ավելին՝ հայերը՝ շուրջ 66 հազար, իսկ պարսիկները՝ առնվազն կրկնակի ավելի),

բ) այդ դաշտի միջնամասով հոսող գետը (Տղմուտը),

գ) ինչպես նաև պարսից և հայոց բանակներին դեպի Ավարայրի դաշտ բերած ճանապարհները:

Ընդունելով հանդերձ Աղաբեկյանի ուսումնասիրության մի քանի հիմնական արդյունքները՝ «Айвазян, 2016»-ը նրանցում կատարել է կարևոր ուղղումներ: Մասնավորապես, ճշտվել է, որ Ավարայրի (ներկայիս Կարազիադինի) դաշտի իրական երկարությունը կազմում է ոչ թե չորս, ինչպես կարծում էր Աղաբեկյանը, այլ մոտ 15 կմ: Ըստ այդմ ու հաշվի առնելով քննության ընթացքում բացահայտված բազմաթիվ նոր տվյալներն ու պատմական նախադեպերը՝ Ավարայրի դաշտում Հայոց բանակի մարտակարգը վերակառուցել ենք բոլորովին տարբեր, առավել հավաստի դասավորությամբ, որը, ի դեպ, առանց անհրաժեշտ հղումի նույնությամբ պատճենվել և արտագրվել է «Հակոբյան, 2017»-ում, ինչին ստորև դեռ մանրամասն կանդրահառնանք: Քննության արդյունքում հերքել ենք Աղաբեկյանի այն սխալ վարկածը, թե իբր Հայկական բանակի ճամբարը գտնվել է Ավարայրի (Կարազիադինի) դաշտից դուրս՝ 20 կմ հեռավորության վրա՝ ցույց տալով, որ այն եղել է հենց Ավարայրի դաշտում՝ Տղմուտի հյուսիսային ափին [12, էջեր 203-204 (ծնթ. 437), 220-222]: Նշված ծանրակշիռ սրբագրություն-

ները չնկատելով կամ չնկատելու տալով՝ Ա.Հ.-ն գրում է, թե Հ. Աղաբեկյանի՝ Կարազիադինի դաշտում Ավարայրի ճակատամարտի տեղի ունեցած լինելու վարկածը կրկնվել է «Айвазян, 2016»-ում՝ «առանց յատուկ փաստարկելու կամ որևէ վերապահության» [9, էջ 107]<sup>3</sup>: Հիմնագուրկ այս հանդիմանությունը առնվազն անուշադրության հետևանք է, եթե ոչ իրականությունը աղճատելու փորձ:

### Նախնական դիտողություններ

«Հակոբյան, 2017»-ը գերձանաբեռնված է հայկական մատենագրական աղբյուրներից քաղված ընդարձակ գրաբար մեջբերումներով, որոնք, մանր մեջբերումների հետ միասին, կազմում են հոդվածի գրեթե կեսը՝ տպագիր 20,5 էջից մոտավորապես 9-ը (գրեթե ամբողջությամբ գրաբար են 108-109 և 112-119 էջերը): Այդ պատճառով ամբողջ հոդվածը դժվարամարս է լինելու անգամ ոսկեդարյան ու վաղմիջնադարյան աղբյուրներին լավածանոթ մի բուռ մասնագետների համար: Իսկ պատմաբանասիրական պակաս պատրաստություն ունեցող ընթերցողներին մնում է միայն ըմբռնել Ա.Հ.-ի հիմնագուրկ պնդումները: Գրաբար այդ քաղվածքներն աշխարհաբարի չվերածելով (այսինքն՝ չվերծանելով ու չպարզաբանելով)՝ հեղինակը դրանք այնուհետև օգտագործում է կամայականորեն՝ ուզած բառակապակցությունն ու հատվածը դիպաշարից հանել-պոկելով և այն ուզած կերպ մեկնաբանելով՝ առանց դույզն-ինչ բավարար փաստարկման: Այս սիրողական մոտեցմամբ խաթարվում է պատմական հաղորդումների իմաստային բովանդակությունը, դեպքերի հաջորդականությունն ու ժամանակագրական կառուցվածքը, ինչպես նաև անտեսվում են գիտական շրջանառության մեջ արդեն իսկ դրված քննական մեկնությունները: Մասնավորապես, ինչպես ցույց կտանք, հետևողականորեն շրջանցվել են (ներառյալ յուրացման ճանապարհով) «Айвазян, 2016»-ի արդյունքները, որոնք հղվել են ընդամենը մեկ մասնավոր դեպքում՝ Առանձար Ամատունու մասին դրվագում (ստորև այդ մասին դեռ կնշվի): Հետևաբար, ձևական պետք է համարել Ա.Հ.-ի այն դրական հղումը, որտեղ նա ընթերցողին խորհուրդ է տալիս Ավարայրի ճակատամարտին վերաբերող բնագրային հատվածների «բանասիրական խորը խնդիրների համար» ծանոթանալ Կ. Յուզբաշյանի և իմ, իր իսկ խոսքերով,

<sup>3</sup> Հարկ է նշել, որ «առանց յատուկ փաստարկելու կամ որևէ վերապահության» ձևակերպման վերջին երեք բառերը բացակայում են «Հակոբյան, 2017» հոդվածի տպագիր տարբերակից, սակայն առկա են *academia.edu*-ում՝ հեղինակի էջում գետնոված տարբերակում՝ հրատարակման պահից (2017 թ.) մինչև առնվազն 2026 թ. փետրվարի 2-ը, երբ այն վերջին անգամ ստուգել ենք ([URL: https://www.academia.edu/34569812/THE\\_LOCALIZATION\\_OF\\_AWARAYR\\_FIELD](https://www.academia.edu/34569812/THE_LOCALIZATION_OF_AWARAYR_FIELD)):

<sup>1</sup> Ներկա նյութին կից տե՛ս «Айвазян, 2016»-ի (այն է՝ [9]-ի) ներդիրում տպագրված հետևյալ քարտեզը՝ «Карта 1. Армяно-персидская война 449-451 гг.»:

<sup>2</sup> Առաջին անգամ այդ վարկածն առաջարկել էին Գալուստ Շիրմազանյանը և Կարապետ Կոստանյանցը՝ դեռևս 1870-ական թթ. [11, էջ 91]:

«ամփոփիչ հետազոտություններին» [9, էջ 112, ծնթ. 2]: Այս հանձնարարականը նաև մեծապես շփոթեցնող է, քանի որ «Айвазян, 2016»-ում բազմիցս է ցուցադրվել ռազմական պատմության հարցերում Կ. Յուզբաշյանի անձեռն-հասությունը, մասնավորաբար՝ ռազմական տեղեկույթ պարունակող բնագրային տեղիների սխալ ընթերցումները և պատմական տեղեկություններին հակասող ինքնահնար պնդումները [12, էջեր 39-40 և ծնթ. 63, 106, 289, 320, 352, 392, 399, 412, 607, 666, 693, 696, 698, 711]:

«Հակոբյան, 2017»-ի տպագիր և համացանցային ([www.academia.edu](http://www.academia.edu) կայքի «Aleqsan Hakobyan» հեղինակային էջին) տարբերակների միջև կան որոշակի անհամապատասխանություններ: Մասնավորապես, համացանցային տարբերակում խախտված է ծանոթագրությունների հերթականության և միակերպության կարևոր սկզբունքը<sup>4</sup>: Ներկա քննադատական անդրադարձում օգտագործելու ենք հոդվածի տպագիր տարբերակը, որտեղ այդ խանգարիչ թերությունը բացակայում է:

Ստորև քննարկվող հոդվածից քաղված հատվածներում պահպանված է հեղինակի գործածած հին ուղղագրությունը:

**«Հակոբյան, 2017»-ում առաջադրված վարկածն ու դրա հերքումը**

Ա.Հ.-ի վարկածը հետևյալն է. Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել մի գյուղակի մոտ, որը 2-կիլոմետրանոց (1:200000) մասշտա-

բով զինվորական քարտեզների «մի պլանշետում (2k-j38-09)՝ 4-5 կմ Ս. Թաթևի վանքից իջնող արահետով հիւսիս-արեւմուտք, Չանգեւար օժանդակի աջ, արեւելեան ափին նշուած է [որպէս] Աբարաբաշի գիւղակ (Մակու քաղաքից ուղիղ գծով՝ 22 կմ հարաւ, Դրոմրգիդաշ-Չալդրան գիւղից՝ 6-7 կմ հիւսիս-արեւելք, ծովի մակերեսայից՝ 1720 մ բարձրութեան վրայ): «Գուգլում» այն նոր անուն ունի՝ Էմամդղի-Օլլա...: Թւում է, թէ «Մեծ-Աբարա» կամ «Աբարա-գլուխ» նշանակող այս Աբարա-բաշիի համընկնումը հինաւուրց Աւարայր գիւղի հետ, որի մօտ տեղի էր ունեցել 451 թ. Մայիսի 26-ի պատմական ճակատամարտը, կարելի է անվիճելի համարել» [9, էջեր 110-111]: Հեղինակը մի տեղ էլ ավելացնում է, որ դա մի «2-2,5 կմ ձգուող յեռնափակ հովիտ-կիրճի... 3 գետանցների յետևի նեղ ափաշերտ» է՝ չնշելով, սակայն, այդ «ափաշերտի» չափերը [9, էջ 111]<sup>5</sup>:

Ապա հեղինակն հայտարարում է, թե ինքն իբր «ուշադիր վերլուծությամբ» համադրել է (իր անվանակոչմամբ) «Աբարաբաշիի ձորահովտի» բնական առանձնայատկությունները մատենագրական վկայությունների հետ՝ տեղում տեղն առաջարկելով «առարկայօրէն ընկալել Վարդանանց ծրագրած Աւարայրի ճակատամարտի իրական բնոյթը եւ ընթացքը» [9, էջ 111]:

Այս կապակցությամբ նախ ճշտենք, որ Էմամդղի-Օլլան (ըստ Ա.Հ.-ի՝ Աբարաբաշին) պաշտոնապես կոչվում է այլ կերպ՝ Էմամդղի-Քյանդիյե-Օլլա (Emāmqolī Kandī-ye ‘Olyā): Բայց սա ամենևին էլ Աբարաբաշին չէ, որովհետև այդ անունով գյուղը (Abarabashi, պարսկ. اباراباشي) գտնվում է նրանից 1,5 կմ դեպի հարավ: Այս փաստը ճշտելու համար հարկավոր էր ընդամենն Աբարաբաշիի մասին զինվորական քարտեզի հնացած ու ոչ ճշգրիտ տեղեկությունը բաղդատել ժամանակակից տպագիր ու համացանցային քարտեզների ու տեղեկատուների, օրինակ՝ Վիքիպեդիայի «Abarabashi» հոդվածի հետ, որն առկա է չորս տարբերակներով՝ անգլերեն, պարսկերեն, արաբերեն և «հարավ-ադրբեջաներեն» (այն է՝ իրանական թյուրքերեն)<sup>6</sup>: Google Earth և ուրիշ համացանցային քարտեզներում այդ գյուղակն ու նրանից դեպի հյուսիս-արևելք և մի փոքր էլ դեպի հարավ-արևմուտք ձգվող անձուկ դաշտը գտնելու համար կարելի է ներմուծել հետևյալ կոորդինատները՝ 39°07'45"N 44°31'48"E (այնինչ Էմամդղի-Քյանդիյե-Օլլայի կոորդինատներն են՝ 39°8'28.46"N 44°31'15.55"E): Հատկանշական է, որ, ի տարբերություն «Հակո-

<sup>4</sup> Սկզբից՝ էջ 101-ից, մինչև 106-րդ էջ հեղինակի ծանոթագրությունները համարակալված են անընդմեջ հերթականությամբ՝ 1-ից մինչև 26-ը: Սակայն 107-րդ էջից ու մինչև 115-րդ էջն ծանոթագրությունները կառուցվում են արդեն այլ սկզբունքով՝ յուրաքանչյուր էջում սկսվելով 1-ով: Բայց ահա 116-րդ էջից ու մինչև հոդվածի վերջը (էջ 122) դարձյալ որդեգրվել է ծանոթագրությունների անընդմեջ հերթականության սկզբունքը՝ սկսվելով 1-ով ու ավարտվելով 9-րդով: Առհասարակ, ուղղագրական ու կետադրական վրիպակները երբեմն սպորտում են գիտական հրատարակումների մեջ, սակայն այս դեպքում գործ ունենք ոչ միայն տեխնիկական խտանի, այլև աննախադեպ համակարգային գրասխալի հետ: Քանզի ներկա քննական նյութի առարկան ռազմական պատմության հարցերն են, տեղին է մեջբերել մի ուսանելի պատմություն հենց ռազմական անվանի մի գործչի՝ ԽՍՀՄ մարշալ Կ. Ա. Մերեցկովի (1897-1968) հուշերից: Վերհիշելով 1921 թ. Կարմիր բանակի գլխավոր շտաբի ակադեմիայում իր ավարտական աշխատության պաշտպանությունը, որը նվիրված էր նապոլեոնյան ժամանակաշրջանի երկու ճակատամարտերի վերլուծությանը, նա տասնամյակներ անց վերհիշում է, թե ինչպես է հաշվետու նյութերում մեքենագրուհու մեղքով սպրդած վրիպակը պատճառ դարձել, որպեսզի իրեն խստորեն հանդիմանի անձամբ հանձնաժողովի նախագահը՝ հեղինակավոր ռազմական պատմաբան պրոֆ. Վ. Ֆ. Նովիցկին՝ «գլխավոր շտաբի սպային անթույլատրելի անփութություն թույլ տալու համար» [8, էջ 98]: Եվ եթե անգամ երիտասարդ սպայից է արդարացիորեն պահանջվել իր ավարտական թեզում ճշգրիտ և մաքուր գրավոր արդյունք, ապա, վստահաբար, նույնը և ավելին պետք է ակնկալել գիտական կոչում ունեցող պատմաբաններից:

<sup>5</sup> Տե՛ս նաև «Հակոբյան, 2017»-ին կից քարտեզը, որը հրատարակվել է նույն ժողովածուի ներդիրում [9, 160-161 էջերի միջև], ինչպես նաև [academia.edu](http://academia.edu)-ում: Հարմարության համար այն կցված է նաև սույն հոդվածում:  
<sup>6</sup> Այդտեղ նշված է նաև, որ Աբարաբաշիի բնակչությունը, 2006 թ. Իրանում անցկացված մարդահամարի համաձայն, կազմել է 85 մարդ և 16 ընտանիք:

բյան, 2017»-ի հողվածի տեքստի, այնտեղ հրապարակված «Աւարայրի ճակատամարտը» քարտեզում Աբարաբաշին ճիշտ է տեղադրված՝ ըստ երևույթին քարտեզագրի շնորհիվ: Ինչպես դեռ կտեսնենք, սա այդ հողվածի տեքստային և քարտեզագրային տվյալների անհամընկնման միակ դեպքը չէ:

*Չորքերի թվաքանակն ու մարտակարգը՝ ընդդեմ տեղանքի*

Թեև Ա.Հ.-ն հայկական ու պարսկական բանակների թվաքանակի հարցն ընդհանրապես չի քննարկում, նա մի տեղ նկատում է, որ Ավարայրի դաշտում Հայոց բանակն ուներ, «ըստ Եղիշեի՝ 66 հազ. հեծեալ ու հետևակ» [9, էջ 120] (ընդամենը ընդունելով, որ եղած սկզբնաղբյուրներից «իր հաւաստիութեամբ աչքի է ընկնում Եղիշեի շարադրանքը») [9, էջ 112, ծնթ. 2], իսկ մեկ այլ տեղ հպանցիկ նշում է, որ Պարսից բանակը հայկականից «առնուազն կրկնակի խոշոր» էր [9, էջ 111]: Հետևաբար, հեղինակը համաձայն է, որ Ավարայրի ճակատամարտին երկու կողմից մասնակցել է շուրջ 200 000 զինվոր: Ի դեպ, այս թվային գնահատականները ճշտորեն համընկնում են «Айвазян, 2016»-ի արդյունքներին, սակայն հեղինակը խուսափել է հղում անել մեր այդ ուսումնասիրության համապատասխան էջերին՝ անպարզ թողնելով, թե, օրինակ, ինքն ինչպիսի հիմքերով է հանգել այն եզրակացությանը, որ Պարսից բանակը հայկականից «առնուազն կրկնակի խոշոր» էր, այն դեպքում, երբ որևէ աղբյուր պարսիկների թվաքանակն Ավարայրում չի նշում [հմմտ. 12, էջեր 198-201, 237, 244]<sup>7</sup>:

«Հակոբյան, 2017»-ում Ավարայրի ճակատամարտի տեղորոշումն անհիմն է թեկուզ միայն այն պարզ պատճառով, որ Էմամղոլի-Քյանդիյե-Օլյայի (կամ Աբարաբաշի) դաշտը չափազանց փոքր էր նման վիթխարի ուժեր տեղավորելու համար: Քննարկվող հողվածին կցված քարտեզում (արտատպումը կցված է ներկա նյութին) հայկական ու պարսկական բանակների ճակատը ձգվում է մոտավորապես 3 կիլոմետր, իսկ յուրաքանչյուր բանակի երկուգծանի մարտակարգերն ունեն 300–400 մետր խորություն: Այդպիսի չափերի հարթավայրային հրապարակում (որը, ինչպես քիչ հետո ցույց կտանք, իրականում էլ ավելի փոքր է) անհնար էր մարտական կարգով շարել Վարդան Մամիկոնյանի գլխավորած 66,000–անոց զորքի նույնիսկ կեսը, էլ չսասած նրան թվապես առնվազն երկու

անգամ գերազանցող պարսկական բանակի մասին: Այնինչ, մեզ հասած հավաստի տեղեկությունների համաձայն, այդ դարաշրջանում 1,5 կմ երկայնքով վեց տողանով կարելի էր շարել ընդամենը 10,000 հետևակային, հետևաբար՝ 3 կմ երկայնքով՝ 20,000 հետևակային: Նույն 3 կմ երկայնքով երկու-երեք տողանով կարելի էր շարել ընդամենը 5 հազար հեծյալ: Սա նշանակում է, որ Ա.Հ.-ի նշած դաշտում թշնամի բանակներից յուրաքանչյուրը երկուգծանի մարտակարգով (ավանդաբար, առաջին գծում՝ հեծելազորը, երկրորդում՝ հետևակը) կարող էր շարել մոտ 25 հազար, իսկ միասին՝ առավելագույնը 50 հազար զինվոր: Բայց չէ՞ որ միայն հայոց բանակը բաղկացած էր 66,000 ռազմիկներից: Եթե հեղինակը նախապես չի իմացել ռազմական պատմաբաններին քաջածանոթ այս տվյալները, նա դրանք պարտավոր էր յուրացնել զոնե իր օգտագործած գիտական գրականությունից, մասնավորապես՝ Հ. Աղաբեկյանի վերոհիշյալ հողվածից ու «Айвазян, 2016»-ից: Սակայն դրսևորելով մի կողմից պատմառազմագիտական անգիտակություն, մյուս կողմից՝ գիտնականին ոչ վայել անուշադրություն՝ Ա.Հ.-ն անտեսում է վերոհիշյալ տարածական-ֆիզիկական իրողությունները, դրանք արձանագրած պատմական տեղեկություններն ու, կոպտորեն սխալվելով, գրում, թե իբր այդ դաշտում «Հայոց զորքը կ'ունենար յիսրժէք ծաւալուելու տարածք» [9, էջ 120]:

Այս կապակցությամբ հիշեցնենք նաև, որ Հ. Աղաբեկյանն Ավարայրի ճակատամարտի ճակատի լայնությունը սխալմամբ գնահատել է 2,5–4 կմ (թյուրիմացաբար կարծելով, թե Ավարայրի դաշտի երկարությունը 4 կմ է), իսկ «Айвазян, 2016»-ում, նրան ուղղելով՝ ցույց ենք տվել, որ այդ ճակատն իրականում ձգվել է մոտավորապես 7–8 կմ [12, էջեր 221-223. հմմտ. 11, էջ 112-113]<sup>8</sup>: Ավարայրի ճակատամարտին վերաբերող այս հաշվարկներն «Հակոբյան, 2017»-ում նույնպես անտեսված են, գուցե՛ն՝ միտումնավոր շրջանցված:

Ավելին, մտացածին են նաև հայկական ու պարսկական բանակների մարտակարգերի այն խորությունները, որոնք պատկերված են «Հակոբյան, 2017»-ին կից քարտեզում: Իրականում, այդ քարտեզում որպես մարտադաշտ նշված տեղանքը խիստ անհարթ է. նրա մակերեսի թեքությունները տեղ-տեղ կազմում են մինչև 25–30 աստիճան, իսկ հարթ տեղամասերը գետի ափերից հակառակ ուղղություններով (դեպի հարավ-արևմուտք ու հյուսիս-արևելք) տարածվում են միջինը ընդամենը մոտ 200 մետր, որոշ

<sup>7</sup> Տե՛ս նաև [12]-ի ներդիրում զետեղված 6-րդ գծագիրը՝ «Схема 6. Аварайрская битва: предположительный количественный расклад сил противников», ինչպես նաև դրա հայերեն տարբերակը՝ սույն նյութին կից՝ «Գծագիր 5. Ավարայրի ճակատամարտում հակառակորդ ուժերի քանակական բաշխման մոտավոր գնահատում»:

<sup>8</sup> Թեև Հ. Աղաբեկյանի գնահատականը վերաբերում է Ավարայրում հայկական բանակի ճակատի երկայնքին միայն, նրա հաշվարկն ամեն դեպքում սխալ է, քանի որ, ինչպես ցույց ենք տվել, նա Կարագիադիսի դաշտի մեծությունը, թյուրիմացաբար, չորս անգամ պակաս է հաշվել:

տեղերում՝ 100 մետրից պակաս: Ասել է թե՛ գետի ափից սկսած ու մինչև բարդ կտրատված տեղանք թշնամի բանակներից յուրաքանչյուրը կարող էր ունենալ ոչ թե միջինը 800 մետր, այլ միջինը 200 մետր հարթ տարածություն, որտեղ անկարելի էր մեծ բանակներ բացազատել՝ ընդունելով Ա.Հ.-ի քարտեզում պատկերված մարտակարգերը (դրանք էլ, ընդ որում, ինչպես քիչ անց մանրամասն կանդորառոնանք, պատճենվել են «Айвазян, 2016»-ում գետեղված Ավարայրի ճակատամարտի զույգ քարտեզներից ու փոխադրվել Աբարաբաշի դաշտի հիմքի վրա):

Հեղինակը աչքաթող է արել նաև մի շարք այլ պատմառագմագիտական հանգամանքներ, որոնք կարևոր նշանակություն ունեն քննարկվող հարցն էլ ավելի առարկայորեն պատկերացնելու համար: «Айвазян, 2016»-ում կատարված քննության համաձայն, Ավարայրի ճակատամարտում հակառակորդների հեծյալ ուժերի համագումարը կազմել է շուրջ 90–100 000 մարդ, ըստ այդմ՝ մարտադաշտ է հանվել շուրջ 150 000–200 000 ձի, քանի որ, բացի ռազմիկների հեծած ձիերից, երկու բանակներում էլ անհրաժեշտաբար եղել են մեծ քանակությամբ պահեստի ձիեր, ինչպես նաև զրաստներ [12, էջեր 244, 252], իսկ պարսից զորակարգում՝ նաև, մեր կատարած հաշվումներով, մոտ 40 մարտական փիղ [12, էջեր 233-242, 244, 252]<sup>9</sup>: Հետևաբար, Էմամղոյի-Քյանդիյե-Օյսյի կամ Աբարաբաշի դաշտի նեղ ու կտրատված տեղանքի պայմաններում երկու կողմերի հետևակային ու հեծելագորային (ներառյալ զրահակիր ծանր հեծյալների) բազմահագարանոց գնդերը ու պարսից փղագորի<sup>10</sup> ստորաբաժանումները բացազատելու, ապա արագ ընթաց գորաշարժերի ենթարկելու մասին վարկածը չի կարող արժանահավատ համարվել և ավելի շուտ վկայում է խնդրի ոչ բավարար մասնագիտական ըմբռնման մասին:

*Աբարաբաշին Ավարայրը չէ*

Արժեզուրկ է նաև «Հակոբյան, 2017»-ում Աբարաբաշին Ավարայր տեղանվան հետ նույնացնելու ստուգաբանական ճիգը, քանզի «բաշի» մասնիկը թյուրքերեն «գյուխ»/«գագաթ» (փխր.՝ դեկավար, պետ) բառն է, իսկ «ար»-ը՝ պարսկերեն «ջուրն» է, որն իբրև բառարմատ

շատ հաճախ է հանդիպում իրանական տեղանուններում: Թյուրքերը 451 թվականին Հայաստան դեռ ոտք չէին դրել, ուստի Աբարաբաշի տեղանունն առաջացել է դարեր անց, հավանական է նույնիսկ՝ նոր կամ նորագույն շրջանում: Առանց «բաշի» բաղադրիչի «Աբարա»-ն չունի Ավարայրի վերջին «ր»-ն, որը ևս հուշում է, որ գործ ունենք պատահական անհամոզիչ նմանության հետ: Ավելին, խոսակցական պարսկերենում «Ար(ք)արե»-ն (آبر) նշանակում է ջրամբար [18, էջ 33], իսկ Ա.Հ.-ի օգտագործած (ԽՍՀՄ Գլխավոր շտաբի) նույն քարտեզում Էմամղոյի-Քյանդիյե-Օյսյա և Աբարաբաշի գյուղերի շրջակայքում նշված են երեք ջրաղաց, որոնցից յուրաքանչյուրը, բնականաբար, ունեցել է իր ջրամբարը: Այսպիսով, պարսկերեն ու թյուրքերեն բառերից բաղկացած Աբարաբաշի տեղանունը ո՛չ ստուգաբանորեն, ո՛չ էլ իմաստային առումով որևէ կապ չունի հայերեն Ավարայր տեղանվան հետ:

*Պարսից բանակի երթուղին*

Ըստ Ա.Հ.-ի, պարսկական բանակը շարժվել է «Ատրպատականն ու Մեծ Հայքի հարավարևելքը (Հեր գաւառը) Կոզովիտ գաւառով անցնող Արտաշատ—Տիգրանակերտ «Արքայական ճանապարհին» (իսկ նրանով էլ՝ բուն Այրաբատեան ոստանին) կապող հինաւուրց մայրուղով», «արտագիսս մայրուղով...», «լեռներով շրջափակ» ձորահովտով ընթացող Խոյ—Արտաշատ հինաւուրց մայրուղով» [9, էջեր 107-109, 111]: Ընդ որում, «Հակոբյան, 2017»-ում այդ նեղիկ, բարդ լեռնային ճանապարհը հետևողականորեն կոչվում է «մայրուղի», որն իբր հարմար էր մեծ բանակների ու փղերի ռազմերթի համար, իսկ ահա մյուս, ավելի լայն ու սարահարթային ճանապարհները՝ իսկական մայրուղիները, քարոզչական թեթև հնարքով անվանվում է «ուղի», ահավասիկ. «Աւարայրի դաշտը պետք է փնտրել միմիայն այս՝ բազմիցս վկայուած հին մայրուղու վրայ (անկախ այլ, սակայն մեծ բանակների ու փղերի համար անյարմար ուղիների գոյութիւնից)» [9, էջ 110, ընդգծումը մերն է՝ Ա. Ա.]:

Սակայն հեղինակի նշած «մայրուղին» մինչև Աբարաբաշի դաշտը հասնելը վերջին 5–6 կիլոմետրը, սկսած այժմյան Բաբալու բնակավայրից, պարզապես ընդհատվում է: Այսինքն՝ եթե պարսից բանակը այդպես շարժվեր, ստիպված կլիներ անցնել իսկական անճանապարհությամբ՝ լեռնային կտրտված տեղանքով, որտեղ անգամ այսօր որևէ ճանապարհ չկա: Այսպիսին է այն «մայրուղին», որ հայտնաբերել է Ա.Հ.-ն:

Պատահական չէ, ուրեմն, նրա այն պնդումը, թե Ավարայրի դաշտը Կարազիաղինի դաշտի հետ նույնացնելու օգտին Հ. Աղաբեկյանի ներկայացրած փաստարկների մի կարևոր մասը իբր

<sup>9</sup> Ա.Հ.-ն, կարելի է ենթադրել, համաձայն է այս գնահատականների հետ, քանի որ նրա հրապարակած քարտեզ-գծագրում պարսից և հայոց հեծելագորի ու հետևակի հարաբերակցություններն ու դաշտային տեղաբաշխումը լռելյայն պատճենված են «Айвазян, 2016»-ում գետեղված քարտեզ-գծագրերից [իմմտ. 12, ներդիր՝ Գծագրեր (Схема) 3 և 4]: Հարմարության համար դրանց հայերեն տարբերակները և «Հակոբյան, 2017»-ի քարտեզ-գծագիրը կցված են սույն նյութին՝ տե՛ս Գծագրեր 1, 2, 3:

<sup>10</sup> «Փղագոր» (անգլ.՝ elephantry, ռուս.՝ элефантерия) եզրույթը շրջանառության մեջ ենք մտցնում «հեծելագոր» ու «հետևակագոր» եզրույթների նմանակությամբ:

«առնուազն անուղղակի են, օր.՝ կիրմետրերով ու մդոններով հաշվները, քարտեզներով կարճ ուղիներ (փոխանակ՝ պատմականօրէն վկայուածներ) փնտրելը» [9, էջ 105]: Այս անիրավացի կշտամբանքը բացահայտում է հեղինակի անպատրաստությունը պատմառազմագիտական մեթոդաբանության հարցերում, քանզի քարտեզների հետ մանրակրկիտ աշխատանքը՝ հատկապէս ռազմական գործողությունների թատերաբեմում գլխավոր և երկրորդական ճանապարհների առկայության, երկարության ու անցանելիության ճշգրտումը, վճռորոշ նշանակություն ունի անցյալում տեղի ունեցած պատերազմների քննության և լուսաբանման համար: Ռազմական տեսության դասական Կարլ ֆոն Կլաուզեփցը մի առիթով արձանագրելով, որ «մարտերում ժամանակն ու տարածությունը կարևոր տարրեր են», պարզաբանում էր. «Այն ժամանակներում, երբ մարտադաշտում հեծելազորի վճռական գործողությունները առաջնային դեր էին կատարում, արագ ու հնարամիտ որոշումների հասկացությունը նախևառաջ ենթադրում էր ժամանակի և տարածության ճիշտ գնահատում» [15, էջ 62]: Առհասարակ, ռազմական պատմաբանը, ուսումնասիրելով զորահրամանատարների գործողությունները, պետք է ձգտի հասկանալ և վերակառուցել նրանց մտահղացումն ու ծրագրերը՝ ուշադրություն դարձնելով դրանց վրա ազդող ժամանակային և տարածական գործոններին, որոնք քննարկվող հոդվածում անտեսվել են: «Հակոբյան, 2017»-ում իսպառ բացակայում են ոչ միայն ճանապարհների, այլև ընդհանրապէս տարածական ու քանակական չափումների, ինչպէս նաև ժամանակային խնդիրների որոշման փորձերը:

Ուստի օրինաչափ է, որ Ա.Հ.-ն չի կիրառում պատմառազմագիտական մեթոդներ՝ իր ենթադրած երթուղիներով գորքերի անցումը հիմնավորելու համար: Փոխարենը բերում է սիրողական բնույթի փաստարկներ: Օրինակ, ըստ նրա, 451 թվականին պարսից շուրջ 120-հազարանոց բանակը պետք է շարժվեր այդ իբր «պատմականօրէն վկայուած ուղիներով» (որը, ինչպէս տեսանք, իրականում վերջում ընդհատվող նեղիկ լեռնային ճանապարհ է), որովհետև, նրա պնդմամբ, նույն ճանապարհով մոտ երկու դար առաջ իբր շարժվել է Անակ Պարթևի փոքր կարավանը [9, էջ 108]: Իրականում, այդ կարավանը բաղկացած է եղել մի քանի տասնյակ կամ, առավելագույնը (որ քիչ հավանական է), մի քանի հարյուր ուղևորներից<sup>11</sup>: Համեմատելով քանա-

կապես ու որակապես անզուգադրելի մեծությունները՝ փոքրաթիվ կարավանն ու բազմահազարանոց զորաբանակը, Ա.Հ.-ն չի ըմբռնում այն պարզ իրողությունը, որ *պատերազմող 120-հազարանոց բանակը* չէր անցնի արահետի նմանվող մի ճանապարհով, որով խաղաղ ժամանակ կարողացել էր անցնել *30-40-հոգանոց կամ թելուզ 300-400-հոգանոց խումբը* (ի դեպ, Անակ Պարթևի երթուղին էլ ընդամենը նրա ենթադրությունն է):

Նույնչափ կարևոր է հարցը, թե ո՞ր էր պատրաստվում շարժվել պարսից ահռելի զորքն այժմյան Աբարաբաշի դաշտ հասնելուց հետո: Չէ՞ որ նրանց առջև փակուղի էր Կարադաղի լեռնազանգվածը (2780 մ): Միակ ուղին, որն այնտեղից տանում էր դեպի Հայաստանի Միջնաշխարհ, Դիբեկ—Քարեխաչ—Մակու մտավորապես նույն բարձրության հասնող լեռնանցքն էր, որը ձգվում է շուրջ 40 կմ: Այս բարդագույն ճանապարհահատվածի հաղթահարումը պարսից բանակից պահանջելու էր ուժերի անիմաստ գերլարում և անխուսափելի կորուստներ<sup>12</sup>: Մինչդեռ Հեր-և-Չարևանդ գավառից դեպի Միջնաշխարհ կարելի էր շարժվել անհամեմատ ավելի դյուրին՝ սարահարթային Կարազիադին—Մարգիան մայրուղով:

Իսկ Փայտակարանից Հայաստան ուղղվող պարսից բանակի գլխավոր ուժերը, Թավրիզում կենտրոնանալուց հետո, Ավարայրի դաշտ պետք է հասնեին Թավրիզ—Մարանդ—Թեփեբաշի (որը Հեր-և-Չարևանդ գավառի մասն է եղել)—Կարազիադինի դաշտ և Թավրիզ—Մարանդ—Աղբուլաղի հովիտ—Խոյի դաշտ—Կարազիադինի դաշտ տանող ճանապարհներով [12, էջեր

ուղևորական կարավանի և ճամբարի իմաստով: «Հայկազյան բառարան»-ում բանակ բառի իմաստներից մեկն այսպիսին է՝ «Կարաան ուղևորաց. և Տեղի իջևանելոյ. դադարք» [5, էջ 433]: Օգտագործելով Լ. Տեր-Պետրոսյանի նշված թարգմանությունը՝ Ա.Հ.-ն, փոխանակ պարզաբանելու «բանակ»-ի այդ ընդունելի իմաստային կիրառումը, ընդհակառակը՝ ընդգծել է այդ բառը՝ ակնհայտ նպատակ ունենալով ընթերցողի մոտ մեծ զորքի պատրանք ստեղծել: Մինչդեռ Ազաթանգեղոսի երկի հայկական տարբերակում այդ կարավանի կազմում որևէ զինված ջոկատ չի հիշատակվում. նշվում են միայն Անակի և նրա եղբոր ընտանիքները՝ կանայք ու զավակները, իրենց ունեցվածքով հանդերձ [1, էջեր 28-31]:

<sup>12</sup> Հնարավոր է՝ Ա.Հ.-ին շփոթության մեջ են գցել իր օգտագործած ԽՍՀՄ բանակի Գլխավոր շտաբի զինվորական քարտեզները [9, էջ 110], որոնցում նշված են Էմամղոյի—Քյանդիյե—Օյա բնակավայրերից դեպի Մակու տանող, Բարունով և Թիքմեով անցնող լեռնային երկու գառնավայր արահետներ, որոնք կտրում-անցնում են վերոնշյալ Կարադաղ/Karadag լեռնազանգվածը: Սակայն, եթե անգամ այդ արահետները գոյություն ունեն, դրանք այնքան աննշան են, որ նույնիսկ այսօր չեն երևում *Google Earth* ծրագրի արբանյակային պատկերներում, այսինքն՝ ճանապարհի մասին խոսելն իսկ ավելորդ է: Ավելին, ըստ հիշատակված քարտեզների, գագաթնամերձ հատվածում այդ մտացածին երթուղին տեղ-տեղ ունենալու էր մեծ բանակի անցման համար ոչ պիտանի՝ 40%-ը գերազանցող թեքություն:

<sup>11</sup> Ազաթանգեղոսի երկի «Վարք» տարբերակի ասորական խմբագրության հայերեն թարգմանության մեջ Անակ Պարթևի ու իր եղբոր ընտանիքներից, նրանց ուղեկցող ծառաներից ու զինված ջոկատից բաղկացած խումբը կոչվել է «բանակ» [10, էջ 45] ոչ թե մեծ զորաբանակի, այլ

197-198, 357]<sup>13</sup>: Ընդ որում, Ավարայրի (Կարազիադիինի) դաշտ մտնելիս՝ մեկ առանձին կետում Հայոց բանակի հանկարծակի հարձակումից ապահովագրվելու նպատակով, պարսից հրամանատարությունը պետք է նախապես այդ դաշտի հարավային մասում ստեղծեր միանգամից մի քանի ռազմահենադաշտ (պլացդարմ), և միայն դրանից հետո արագորեն ու միաժամանակ իջներ այնտեղ հիմնական ուժերով: Ուստիև Թեփեբաշիից մինչև Կարազիադիինի դաշտ պարսից բանակը շարժվել է, ըստ ամենայնի, ոչ թե մեկ, այլ չորս հիմնական ճանապարհներով, այդ թվում՝

- 1) Թեփեբաշի—Պիրքենդի—Սիաբազ—Կարազիադիինի դաշտ,
- 2) Թեփեբաշի—Պիրքենդի—Դուլքենդի—Չորս—Կարազիադիինի դաշտ,
- 3) Թեփեբաշի—Հյուսեյնաբադ—Կարազիադիինի դաշտ,
- 4) Ադրուլադի հովիտ—Խոյի դաշտ (Վիշլեկ)—Դիզեղ-Չեմշիդիսան—Գերդենեյե-Խեյզան լեռնանցք—Կարազիադիինի դաշտ (տե՛ս Գծագիր 4):

1-ին և 2-րդ երթուղիները կարճ են, 3-րդը՝ առավել հարթ (սակայն նեղ հովտով, բարձր ռիսկայնությամբ), 4-րդը՝ ամենաերկարն է, անցնում է լեռնանցքով, սակայն ունի փոքր միջին թեքություն՝ մոտ 4% (Գծագիր 4):

Պարսից բանակի գլխավոր հրամանատար Մուշկան Նիսալավուրտը, ընտիր արքայական գվարդիայի՝ Մատեան գնդի հետ, ամենայն հավանականությամբ նախատեսում էր օգտագործել չորրորդ երթուղին: Առաջին երեք ուղիների երկարությունը դեպի Ավարայրի (Կարազիադիինի) դաշտ տատանվում էր 6–12 կմ սահմաններում, մինչդեռ չորրորդ երթուղին՝ սկսած Խոյի դաշտից, կազմում էր մոտ 30 կմ և պահանջում էր մեկ ամբողջ օրվա անցում: Այս հաշվարկով՝ նշանակման շրջանում միաժամանակյա համակենտրոնացումն ապահովելու համար առաջին երեք զորայունները պետք է արշավի դուրս գային միմյանցից մի քանի ժամ տարբերությամբ, իսկ չորրորդը՝ առնվազն կես օր շուտ:

Չորայունների նախնական համախմբումը ենթադրելի է Սիաբազի, Պիրքենդի, Հյուսեյնաբադի և Վիշլեքի մոտակա հարմար տարածքներում, որտեղից առաջապահ հեծելագորային ստորաբաժանումները Ավարայրի դաշտ կարող էին հասնել 1–3 ժամում, իսկ հիմնական ուժերի մեծ մասը՝ 3–6 ժամում: Տեղ հասնելուն պես պարսիկներն անմիջապես դիրքավորվելու էին՝ կանխելու համար Տղմուտի հակառակ ափին

կանգնած Հայոց բանակի հնարավոր հանկարծակի հարձակումը:

Պետք է արձանագրել, որ սասանյան հրամանատարությունը (որում ընդգրկված էր նաև Վասակ Սյունին՝ որոշ այլ դավաճան նախարարների հետ) քաջ ծանոթ էր Հայաստանի տեղանքին ու ճանապարհներին և հետախույզների միջոցով վաղուց ճշտած կլիներ Հայոց բանակի գտնվելու վայրը: Այս հարցերը մանրամասն կլուսաբանվեն՝ երբ ստորև կքննարկվի Առանձար Ամատունու գնդի մասին հաղորդումը:

\*\*\*

Պարսից բանակի երթուղին իր նախանշած ճանապարհով Ս. Թադեոսի (Թադեի) վանքի մոտով անցկացնելու Ա.Հ.-ի անհաջող փորձերը ակնհայտորեն մանիպուլյատիվ են: Նա սկզբնաղբյուրներից կատարում է ընդարձակ մեջբերումներ, ապա փորձում մեկ անհայտը հիմնավորել մեկ այլ անհայտով: Այսպես, նրա համար «կռվան» են դառնում Շավարշան քաղաքը, Սանատրուկ լեռն ու Սանատրուկ դաշտը, որոնցից որևէ մեկը տեղորոշված չէ և ինքն էլ հատուկ քննությամբ դրանց տեղորոշման փորձ չի անում [9, էջեր 108-109]: Ստորև հաջորդաբար ներկայացվում են «Հակոբյան, 2017»-ում մեջբերված մի քանի բնագրային քաղվածքներն ու հեղինակի համապատասխան «փաստարկները», որոնք, իբր, հաստատում են 451 թ. պարսից բանակի՝ նրա առաջարկած երթուղին: Յուրաքանչյուր քաղվածքին ու «փաստարկին» հաջորդում է մեր համապատասխան հերքումը և քննադատական մեկնությունը:

1. «Եւ ինքն սուրբ առաքեալն առնողը գաշակերտսն եւ փոյթով հասանէր յաշխարհն Հայոց, առ թագաւորն Սանատրուկ, ի գաւառին Արտագ, ի քաղաքագեղն Շաւարշան, յապարանս արքունի, ուր էին հովոց գետիք թագաւորացն Հայոց: Եւ քարոզէր անդ զբանն կենաց եւ առնէր նշանագործութիւն[ս] ի դրան արքունի [եւ] ի համաշխարհագարդ բանակսն...» (ընդգծումներն Ա.Հ.-ինն են) [9, էջ 109]:

Եվ ի՞նչ է սա ապացուցում: Չէ՞ որ այստեղ ընդամենը հիշատակվում է առաքյալի ժամանումն Արտագ ու Շավարշան, իսկ վերջինիս տեղադրությունը, ինչպես նշեցինք, անհայտ է, հետևաբար արքունի պալատի մասին այս տեղեկությունը մեզ որևէ բան չի տալիս: Ա.Հ.-ն կրկին ընդգծում է «բանակ» բառը, որն այստեղ իրականում ունի, ինչպես վերևում նշվել է՝ «ուղևորների կարավանի» և/կամ «իջևանատան» իմաստ (տե՛ս վերը, ծնթ. 11):

2. «Անշուշտ, այս նոյն արտագեան մայրուղով էր շարժուել (այլ ոչ թե՛ Մարդաստան-Մարդուցայք գաւառով անցնող ուշմիջնադարեան Ղարաէյնի—Բայազէտ մայրուղով) Մասա-

<sup>13</sup> Տե՛ս նաև [12]-ի ներդիրում գետնեղված քարտեզը՝ «Карта 1. Армяно-персидская война 449–451 гг.», ինչպես նաև դրա հայերեն տարբերակը՝ սույն կյուրթին կից՝ «Զարտեզ 1. 449–451 թթ. հայ-պարսկական պատերազմը»:

նեան արքայ Խոսրով Ա Անուշիրուանի (531–579) բանակը, ինչի մասին վկայություն է պահպանել Մերիոս պատմիչը («...արքայն Պարսից, կոչեցեալ Անուշ Ընուան Խոսրով, հանդերձ **բազմութեանք սպառազէն գաւրացն եւ փղաք բազմաք, եւ ճանապարհ կալեալ ընդ գաւառն Արտազու՝ զնաց ընդ Բագրեւանդ, զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւ»») [9, էջ 109]:**

Աղբյուրից քաղված բնագրային մեջբերման մեջ պարզապես սաված է, որ Խոսրով Ա Անուշիրվանի բանակը՝ փղազորով հանդերձ, անցել է Արտազ գավառով դեպի Բագրևանդ: Սակայն չէ՞ որ նա կարող էր կտրել-անցնել Արտազը Մարգիան-Յոլա-Գյալդի ուղով՝ շրջանցելով Ս. Թադեոսի վանքը: Հետևաբար, քննարկվող հոդվածի հեղինակի կիրառած «անշուշտ»-ը գիտականորեն անարդարացված և մանիպուլյատիվ եզրահանգում է:

3. «Թերեւս՝ նոյն մայրուղով պիտի 484 թ. Դուինից դէպի Հեր գաւառի Նուարսակ գիւղ իջնէր (պարսիկ գորավար Նիխորի հետ բանակցելու) Վահան Մամիկոնեանը, ով ճանապարհին իր գնդերով դադար էր առել «ի գաւառն, որ կոչի **Արտազ, ի գեաւդն, որ անուանեն Եղինդ**», որն արդի Իրինդն է՝ Մակուից 6 կմ հիւսիս-արեւելք» [9, էջ 109]:

Վահան Մամիկոնյանին վերաբերող այս հատվածը սխալ է մեկնաբանված: Բնագրում նշված է, որ Վահան Մամիկոնյանի գնդերը անցել են Իրինդով, այսինքն՝ շրջանցել են ոչ միայն Թադեի վանքը, այլև նույնիսկ Մակուն, քանի որ Իրինդը գտնվում է շրջանցիկ ուղու վրա, ընդ որում՝ Մակուից մոտ 15, այլ ոչ թե 6 կմ հեռավորությամբ:

4. «Վերջապես, կարծես թե, այդ հին մայրուղին է ծառայել անգամ ասորեստանցի Սարգոն Բ-ին (Ք. ա. Ը դար), ով իր վիմագրում յիշում է **Սուրգի** աւանը (Խունդուրնա—Խանդաւարի, Չիրմա—Սուրմի, Էլիյադինիա—Էլիդարայի, Խուռնուկու—Փուռնակի կողքին), որը համադրելի է Չանգեմար օժանդակի ափին, Բարուն գիւղի մօտ գտնուող **Ծործորի** վանքի անուան հետ: Ի դէպ, հնարաւոր է, որ նոյն «Ծործոր» տեղանունն է նշուած Պետինգերեան քարտեզի Արտաշատ—Խոյ ճանապարհա-հատուածում (Անտերա—Խանդաւարի կողքին)՝ աղճատուած Սորուէ (Sorvae) ձեւով (վերականգնելի՝ Սորգէ կամ Սորսէ, հմմ. **Ծործոր**)» [9, էջեր 109-110]:

Այստեղ բնագրի տեղեկությունը, լավագույն դեպքում, կարող է վերաբերել Սարգոնի գորքի շարժմանը խնդրո առարկա շրջաններով, բայց ոչ նրանց հե՛նց Ս. Թադեի վանքի մերձակայքով անցնելուն: Գիտության մեջ մինչ օրս չկա ընդհանուր համաձայնություն ո՛չ Սարգոնի արշավանքի ուղու, ո՛չ էլ Պետինգերյան քարտեզի ուղիների վերաբերյալ: Ա.Հ.-ն փորձում է դրանց

մասին գոյություն ունեցող վարկածային ու աղոտ վերականգնումները ծառայեցնել իր ավագաշեն ենթադրությունը հիմնավորելու նպատակով: Այսպիսի «փաստարկները» գուցե կարող են որոշ հոգեբանական ազդեցություն գործել անպատրաստ ընթերցողի վրա, սակայն պատմագիտական առումով դրանք ամբողջովին արժեզուրկ են:

Վերոշարադրյալը միանգամայն բավարար է «Հակոբյան, 2017»-ում առաջադրված շինծու վարկածը մերժելու համար: Սակայն անհրաժեշտ է անդրադառնալ նույն հոդվածում առկա մի շարք այլ անհանճ խնդիրների ևս՝ հետագայում հայոց ռազմական պատմության (և առհասարակ՝ պատմության) ոլորտում այս կարգի որակագուրկ «վերլուծությունները» հնարավորինս կանխելու և բացառելու նպատակով:

### **Գիտական էթիկայի խախտումներ**

Իր հոդվածը պատրաստելիս Ա.Հ.-ն մեծապես հենվել է «Айвазян, 2016» մենագրության ծավալուն նյութի և քննության վրա, սակայն ընթերցողին այդ մասին չի տեղեկացրել այնպես, ինչպես ընդունված է գիտական գրականության մեջ՝ օգտագործված ուսումնասիրության էջերին համապատասխան հղումներ կատարելով: «Հակոբյան, 2017»-ում ներառված բազմաթիվ դրույթներ և եզրակացություններ ուղղակիորեն և հետևողականորեն փոխառված—վերարտադրված են «Айвазян, 2016»-ից՝ առանց հղումների, ինչը ընթերցողների (հատկապես ռուսերենին չտիրապետողների) մոտ կարող է ստեղծել այն թյուր տպավորությունը, թե դրանք պատկանում են այդ հոդվածի հեղինակին<sup>14</sup>: Ինչպես ցույց կտրվի ստորև, նման փոխառություններն ու արտագրությունները առկա են թե՛ հոդվածի հիմնական շարադրանքում, թե՛ կից քարտեզում: Ահա մի քանի վառ օրինակ:

1. *Խորեն Խորխոռունու՝ հայոց ձախ թևի հրամանատարությունը*

«Հակոբյան, 2017»-ում նշվում է, որ Ղազար Փարպեցու՝ Խորեն Խորխոռունուն և Ներսեհ Բաջրերունուն Ավարայրի դաշտում Հայոց բանակի աջ թևի հրամանատարությունը վերագրելը «ճիշտ չէ, քանի որ նրանք եղել են գորքի ձախ թևում եւ զոհուել այնտեղ՝ ի տարբերություն միւս երկու թևերի հրամանատարների» [9, էջ 118, ծնթ. 1]: Սակայն հեղինակը որևէ հիմնավորում չի առաջարկում այս վարկածի

<sup>14</sup> Իր հոդվածի ամենավերջում Ա.Հ.-ն, կարծես, փորձում է նույնիսկ ամրապնդել ճշմարտությանը հակասող նման կարծիքը՝ ծանոթագրություններից մեկում գրելով հետևյալը. «Ուշագրաւ է, որ որոշ շեղումներով հանդերձ՝ ճակատամարտը գրեթէ նոյնանման փուլերով է դիտարկոււմ նաեւ Արմէն Այվազեանը» (հմմ. Айвазян 2016, 281-309)» [9, էջ 122, ծնթ. 8]: Այս հարցին մանրամասն անդրադարձ կլինի ներկա նյութի 8-րդ ենթագլխում, որը վերնագրված է «Ճակատամարտը «նույնանման փուլերով» դիտարկելու մասին»:

օգտին և չի նշում, որ այն առաջին անգամ առաջադրվել և պատճառաբանվել է «Айвазян, 2016»-ում [12, էջեր 272–274], մինչդեռ նման դեպքերում համապատասխան հղումը գիտական բարեխղճության պարտադիր պահանջ է: Բացի այդ, հայկական բանակի կենտրոնը որպես «թև» ներկայացնելը (ռուս.՝ *фланг, крыло*, անգլ.՝ *flank, wing*), ինչպես վերոբերյալ նախադասության մեջ անում է Ա.Հ.-ն, սխալ է ռազմական տերմինաբանության և մարտակարգի կառուցվածքի տեսակետից: Իրականում Ավարայրի ճակատամարտում հայկական բանակը բաժանված էր աջ և ձախ թևերի, կենտրոնի և պահեստագործի:

2. Հայերի կողմից Ավարայրի դաշտի տեղանքը «նախապատրաստելու» մասին

Ա.Հ.-ն գրում է. «Հայոց բանակն իջել է իր ծրագրած բախման վայրը [Ավարայրի դաշտ]... եւ նախապատրաստել տարածքը» [9, էջեր 119-120]: Սակայն այս տեսակետը նա որևէ կերպ չի պատճառաբանում: Այնինչ Հայոց բանակի գլխավոր ուժերի՝ պարսիկներից մոտավորապես մեկ ամսով ավելի շուտ Ավարայրի դաշտ ժամանելու, այնտեղ որոշակի ամրաշինական աշխատանքներ իրականացնելու և այլ նախապատրաստություններ տեսնելու մասին վարկածն առաջին անգամ ներկայացվել և հանգամանալից հիմնավորվել է «Айвазян, 2016»-ում: Մասնավորապես, հիմք է ընդունվել նույն մենագրության մեջ ճշտված 449–451 թթ. Պատերազմի մանրամասն ժամանակագրությունը, իրադարձությունների հաջորդականությունը, հայոց հրամանատարության որդեգրած ռազմավարությունն ու մարտավարությունը, ինչպես նաև պատմական նախօրինակները [12, էջեր 205-209, 211-212, 337-352]: Ավելին, «Айвазян, 2016»-ում ուրվագծված են Ավարայրի դաշտում հայկական բանակի կառուցած հողային ամրաշինությունները [12, ներդիր՝ Գծագրեր (Схема) 3 և 4, ինչպես նաև դրանց հայերեն տարբերակները՝ սույն նյութին կից՝ Գծագրեր 1 և 2]:

Այս խնդրի առնչությամբ «Հակոբյան, 2017»-ում և նրան կից քարտեզում առկա են ակնհայտ հակասություններ: Այսպես, քարտեզում (սխալ տեղորոշված Ավարայրի դաշտում) պատկերված է միայն պարսկական բանակի դաշտային ճամբարը, մինչդեռ հայկական բանակը, դատելով այդ քարտեզից, ճամբար չունի: Այս դրվագում հողվածն ու նրան կից քարտեզը միմյանց հակասում են միանգամից երկու հարցում: Նախ, ըստ հեղինակի, պարսիկները Ավարայրի դաշտում մարտի են մտել անմիջապես ռազմերթից հետո [9, էջեր 111, 119-120]: Սակայն եթե դա իսկապես այդպես էր (մի պահ անգամ շրջանցելով այն փաստը, որ սա Եղիշեի հստակ հաղորդումներին հակասող

անհիմն ու սխալ կարծիք է), ապա նրանք ճամբար կառուցելու ժամանակ ֆիզիկապես չէին կարող ունենալ: Նման իրավիճակում, երբ բանակը դեռևս չբացազատված (Ա.Հ.-ի ձևակերպմամբ՝ «թերի ծալալուստ») վիճակում անսպասելիորեն ենթարկվել է հարձակման և ներքաշվել ծանր մարտերի մեջ, ճամբարաշինությամբ զբաղվել կարող է միայն ռազմագիտությունից շատ հեռու դեգերող միտքը:

Իսկ իրականում սասանյան հրամանատարությունն այդպիսի (կրկնենք՝ մտացածին) իրավիճակում պետք է ոչ թե ընթացող թեժ մարտերից 1–2 կմ հեռավորության վրա ճամբար կառուցեր, այլ առաջնահերթ զբաղվեր արտակարգ հրատապ խնդիրների լուծմամբ, առաջին հերթին՝ Հայոց բանակի հարձակումը հետ մղելով և երթակարգից հապշտապ մարտակարգի անցնելու բարդագույն գորաշարժը ղեկավարելով: Այսպիսի հարցերի մեջ խորամուխ չլինելով՝ Ա.Հ.-ն իր քարտեզում պատկերել է տվել պարսիկների ճամբարը, ընդ որում՝ դրա վայրն էլ պատճենելով «Айвазян, 2016»-ի համապատասխան քարտեզներից՝ ձախ թևի թիկունքում: Ի դեպ, «Айвазян, 2016»-ում կա ծավալուն վերլուծություն հայկական ու պարսկական դաշտային ճամբարների կառուցման ժամանակի, դերակատարության, տեղորոշման ու քարտեզագրման վերաբերյալ [12, էջեր 204-209, 212, 226-229, 251-253, 263-268, 282, 284, տե՛ս նաև կից քարտեզը]: Այդ էջերը, սակայն, զանց են առնված:

Քննարկվող հողվածում սիրողական մոտեցման հատկանիշներ են նկատվում Հայոց բանակի ճամբարելու հարցում ևս: Սկզբում հեղինակը գրում է, որ Վարդան Մամիկոնյանի բանակը պարսիկներից շուտ է հասել Ավարայրի դաշտ, այնտեղ «անցկացրել զօրատես (ըստ Եղիշեի՝ 66 հազ. հեծեալ ու հետևակ) եւ նախապատրաստել տարածքը» [9, էջեր 119-120] (այս հայտարարությունը փաստորեն հակիրճ կերպով կրկնում է «Айвазян, 2016»-ում կատարված վերոնշյալ ընդարձակ փաստարկումներն ու եզրահանգումները՝ սակայն դարձյալ առանց համապատասխան հղումների): «Տարածքը նախապատրաստելու» մասին վերջին արտահայտությունը պետք է ենթադրեր առնվազն այն, որ հայերն այդ դաշտում բանակել են (վերը՝ 2-րդ ենթագլխում, այդ մասին արդեն նշվեց): Սակայն ներկայացված քարտեզում հայոց ճամբարը, զարմանալիորեն, բացակայում է:

«Հակոբյան, 2017»-ում ստեղծված այս ամբողջ շփոթը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը: Ռազմական պատմագիտության մեթոդաբանությանը, հին ու նոր ռազմական տեսություններին և համապատասխան փաստական հենքին չտիրապետելու հետևանքով հեղինակը չի ունեցել դաշտային ճամբարների կարևոր նշանակության և գործառույթների մա-

սին բավարար պատկերացում: Այդ պատճառով էլ առնչակից խնդիրները դիտարկել է առանց անհրաժեշտ ուշադրության՝ անփութորեն:

### 3-4. Վարդան Մամիկոնյանի մարտավարական մտահղացումը

Ա.Հ.-ն գրում է, որ Վարդան Մամիկոնյանն, «իր առանձնացրած չորրորդ՝ հարուստային հեծեալ գնդով... Խորեն Խորխոռունու ձախակողմեան գնդի հետ միասին» գրոհելով պարսից բանակի աջ թևի դեմ՝ նպատակ ուներ «ջախջախել... թշնամու աջ թևի մարտաշարքերը, դրանց մնացորդները շարտել («զորել») կենտրոնի շարքերի վրայ ու ծագած խուճապի արդիւնի շնորհիւ փախուստի մատնել ամբողջ հսկայ բանակին» [9, էջեր 120-121]:

Այս կարճ տողերում վերարտադրվում են «Айвазян, 2016» մենագրության երկու կարևոր բացահայտումները: Առաջինը՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորած պահեստագորային («չորրորդ») զորագունդն ամբողջությամբ հեծելագորային էր, և երկրորդը՝ թե ինչ մարտավարական մտահղացմամբ ու ռազմական պլանով էր սկսել Ավարայրի ճակատամարտը հայոց սպարապետը: Այս հարցերը պարզաբանելու համար մեզ պահանջվել է գրել ընդարձակ վերլուծական գլուխներ [մասնավորապես՝ 12, էջեր 111-115]<sup>15</sup>, ըստ էության՝ մի ամբողջ մենագրություն, մինչդեռ «Հակոբյան, 2017» հոդվածի հեղինակը փաստորեն վերարտադրել է «Айвазян, 2016»-ում ներկայացված եզրահանգումները՝ առանց պատշաճ հղման և առանց սեփական հիմնավորման կամ բացատրության:

Ի դեպ, այս դրվագում Ա.Հ.-ն թարգմանաբար օգտագործել է նաև Վարդան Մամիկոնյանի պահեստագորային զորագնդին մեր տված ռազմագիտական բնորոշումը՝ «հարվածային» (*ударная [группировка], ударный [корпус, конный полк]*) [12, էջեր 293-294, 299, 304-305]<sup>16</sup> չնշելով, թե ով և ինչ ռազմատեսական հիմքերով

է այն այդպես անվանել: Այնինչ «հարվածային զորախումբ (զորախմբավորում)» ռազմական եզրույթը, որը փոխառել ենք Կարմիր բանակի 1920-1940-ական թթ. զործածական բառապաշարից, բավականին տարողունակ բովանդակություն ունի: Մասնավորապես, հարձակողական միջոցներով ուժեղացված հարվածային զորախումբն առանձնացվում էր հարձակման ժամանակ թշնամուն գլխավոր հարված հասցնելու և նրա պաշտպանությունը ճեղքելու, իսկ պաշտպանության ժամանակ՝ հակագրոհներ ձեռնարկելու համար: Ինչպես ցույց է տրված «Айвазян, 2016»-ում, Ավարայրի ճակատամարտում ճիշտ այդպիսի խնդիրներ էին դրված Վարդան Մամիկոնյանի պահեստագորային զորագնդի առջև, ինչն էլ հենց արդարացնում է դրա «հարվածային» բնորոշումը:

### 5. Պարսից կենտրոնի նահանջն ու հայոց ձախ թևի դեմ դիրքավորվելը

Ա.Հ.-ն, առանց անհրաժեշտ բացատրությունների և հիմնավորումների, գրում է. «Հայոց ձախակողմեան գնդերին գրեթե յաջողուել է կատարել խնդիրը եւ, ջախջախելով Պարսից աջ թևը՝ ընդհուպ մօտենալ կենտրոնին: Մուշկանը հասցրել է համախմբել ուժերը... եւ իր կենտրոնի մարտունակ գնդերը շրջել Վարդանի զորախմբի դեմ՝ ի վերջոյ, օղակելով նրան» [9, էջ 121]: Իրականում այս եզրակացությունը ևս վերցված է «Айвазян, 2016»-ից, որտեղ Ավարայրի ճակատամարտի քննության ընթացքում պարսից կենտրոնի այս վճռորոշ զորաշարժը ենթարկվել է համակողմանի և մանրակրկիտ վերլուծության՝ պատմա-բանասիրական և ռազմագիտական նոր վերծանումներով ու պարզաբանումներով [12, էջեր 295-305]: Այնուամենայնիվ, այդ աշխատանքին որևէ ձևով անդրադարձ չի կատարվել:

### 6. Հայոց կենտրոնի և աջ թևի գործողությունները

Ա.Հ.-ն գրում է, որ Ավարայրի ճակատամարտի սկզբում «գրոհ են սկսել նաեւ [հայոց] միւս երկու ճակատները (իմա՝ կենտրոնն ու աջ թևը՝ Ա.Ա.), սակայն այնտեղ մինչեւ վերջ գերակշռել են նետաձգութիւնն ու նիզականետութիւնը... իսկ գետնանցում չի արուել» [9, էջ 121]:

Նախ պետք է նկատել, որ մինչև «Айвазян, 2016»-ի հրապարակումը հայոց կենտրոնական և աջակողմյան խմբավորումների գործողությունների բնույթի հարցը որևէ ուսումնասիրության մեջ հատուկ քննարկման առարկա չէր դարձել: Ուշադիր քննելով ճակատամարտի ընթացքը, ինչպես նաև այն վարելու հայկական ու պարսկական հրամանատարությունների մարտավարական մտահղացումները՝ «Айвазян, 2016»-ում հիմնավորվել է, որ Վարդան Մամիկոնյանը մտածված կերպով հանձնարարել էր իր

<sup>15</sup> Աշխատությանս մեջ բազմիցս, փաստարկված հիմքերի վրա, շեշտվում է, որ ամբողջովին հեծյալ էր դեռևս 450 թվականի սկզբին կազմավորված ու Վարդան Մամիկոնյանի հրամանատարության տակ դրված 20,000-անոց 2-րդ հայկական բանակը, որի մտավորապես կեսից Ավարայրի դաշտում կազմվել էր հայոց պահեստագորային զորագունդը, իսկ մյուս կեսը տրվել էր ձախ թևին [12, էջեր 112, 127, 253, 274 և այլն]: Իսկ Ավարայրում Վարդան Մամիկոնյանի մշակված մարտավարական դիտավորության մասին, մասնավորապես, պարսիկների թևերից մեկը (աջը) ջախջախելու, նրանց թիկունք դուրս գալու, կենտրոնի ու մյուս (ձախ) թևի վրա շարտելու ծրագրի մասին գրել են և՛ «Վարդան Մամիկոնյանի մտահղացումը» (Замысел Вардана Мамиконяна) վերնագրով առանձին գլխում՝ ընդամին համեմատելով Խաղիսաղի ու Ներսեհապատի ճակատամարտերում հայոց որդեգրած նույն մարտավարության հետ (նույն տեղում, էջեր 281-288), և՛ Ավարայրի ճակատամարտի բուն ընթացքը վերլուծելիս (հատկապես՝ էջեր 292-301):

կենտրոնին և աջ թևին ժամանակավորապես կատարել միայն կաշկանդիչ դեր: Կենտրոնի և աջ թևի հիմնական խնդիրը եղել է հակառակորդին չթույլատրել ուժեր տեղափոխել դեպի պարսից աջ թևի (հայոց ձախ թևի) ճակատը, որտեղ պետք է որոշվեր ճակատամարտի ելքը: Միայն ձախ թևում վճռական հաջողություն արձանագրելու պարագայում էր նախատեսվում հայկական բանակի համաժամանակյա և ամբողջական հարձակումը [12, էջ 287, 293-294, 302]:

Ինչ վերաբերում է հայոց բանակի կենտրոնական և աջակողմյան խմբավորումների առջևում գտնվող պարսից զորքերի որդեգրած գերազանցապես պաշտպանողական մարտավարությանը, ապա «Айвазян, 2016»-ում ցույց է տրված, որ սասանյան ռազմատեսական դրույթների համաձայն՝ ձախ թևը հարձակողական գործողություններ սովորաբար չէր նախաձեռնում [12, էջեր 123-124, 295], մինչդեռ պարսից կենտրոնը ճակատամարտի ընթացքում պարտավորվեց հրաժարվել իրեն նախապես հանձնարարված պաշտպանողական-հարձակողական մարտավարությունից (իմա՝ պաշտպանությունից հետո միայն հակահարձակմանն անցնելու սկզբունքից) և հիմնական ուժերով հետ քաշվել՝ իր թիկունք դուրս եկող հայոց ձախ թևի դեմն առնելու նպատակով [12, էջեր 296-301]:

Ա.Հ.-ն, շրջանցելով «Айвазян, 2016»-ի փոխկապակցված և փոխյրացնող եզրակացությունները, փաստորեն գեղարվեստականացրել է դրանցում ներկայացված ընդհանուր պատկերը՝ ճակատամարտի տվյալ տեղամասերում թե՛ քախումների սակավությունը բնութագրելով որպես Տղմուտի «հայկական» ափից ձեռնարկված «նետաձգություն և նիզականետություն» և ներկայացնելով դա որպես հայոց «գրոհ»: Իրականում այսպիսի ենթադրյալ նետաձգությունն ու նիզականետությունը չի կարելի հայոց «գրոհ» համարել. ռազմական առումով դա անհիմն չափազանցություն է, քանի որ նույն զինատեսակներին պարսից զորքերն էլ էին վարպետորեն տիրապետում [12, էջեր 124-125] և, օգտվելով թվային գերակշռությունից ու մարտակարգերի կայունությունից, կարող էին դրանք կիրառել ավելի մեծ ծավալով և արդյունավետությամբ: Հետևաբար գետի հակառակ ափերից ծագած նմանատիպ երկկողմանի հեռամարտը հայոց «գրոհ» որակելը սխալ է թե՛ մարտավարական, թե՛ ռազմատեսական ու տերմինաբանական իմաստով<sup>16</sup>:

Ավելին, մեր ունեցած տվյալները բավարար հիմք չեն տալիս համարելու, թե ճակատամարտի նշված հատվածներում կռիվները սահմանափակվել են միայն «նետաձգությամբ ու նիզականետությամբ», ինչպես ենթադրում է քննարկվող հոդվածի հեղինակը՝ բացառելով երկու կողմերից որևէ մեկի գետանցման փորձը, հակառակորդի հետ անմիջական շփման մեջ մտնելը և կարճատև մերձամարտը: Ընդհակառակը, ինչպես ցույց է տրված «Айвазян, 2016»-ում, մեծ հավանականությամբ հայոց աջ թևը՝ հեծելագործի ուժերով, անցել է գետը, հասցրել կարճ, բայց զգալի հարված պարսից ձախ թևին և ապա սրընթաց վերադարձել իր կանխապես ամրացված ելման դիրքերը՝ պահելով նոր գրոհ ձեռնարկելու սպառնալիքը: Այդպիսով հայոց աջ թևը կատարել է կաշկանդիչ դեր՝ թույլ չտալով, որ պարսից ձախ թևը օգնության հասնի ծանր կացության մեջ հայտնված իր կենտրոնական զորախմբին [12, էջ 294]: Ճակատամարտի տվյալ հատվածում՝ հայոց բանակի աջ թևում, մասնակի գետանցումներն ու կարճ հարվածները միանգամայն հնարավոր էին նաև պարսիկների կողմից: Ճակատամարտի սկզբնական փուլում նույնանման կաշկանդիչ դեր, ըստ ամենայնի, կատարել է նաև հայոց բանակի կենտրոնը:

Միաժամանակ, «Հակոբյան, 2017» հոդվածի հեղինակը զրացել է նշել, որ Հայոց բանակի կենտրոնում և աջ թևում թե՛ մարտերի հարաբերական սակավության հարցը առաջին անգամ առաջադրվել և քննության է առնվել «Айвазян, 2016»-ում: Ավելին, Ա.Հ.-ն փորձում է ներկայացնել պատմառազմագիտական առումով թերի և չիմնավորված իր նոր թեզերը (մասնավորապես՝ ճակատամարտի նշված տեղամասերում ընթացած կռիվները սահմանափակելով միայն նետաձգությամբ և նիզականետությամբ)՝ առանց նախապես անդրադառնալու և փաստարկված կերպով մերժելու այս խնդրին վերաբերող մեր հանգամանորեն պատճառաբանած տեսակետը: Ակադեմիական ուսումնասիրություններին ոչ հարիր նման մոտեցումը, որպես կանոն, բնութագրվում է որպես սիրողականության (դիլետանտիզմի) դրսևորում:

#### 7. Վահան Արծրունու ջոկատն ու նրա գրոհը

Ա.Հ.-ի ներկայացմամբ՝ Ավարայրի ճակատամարտի վերջնական փուլում Վահան Արծրունին, Հայոց բանակի «կենտրոնի գնդից արիաբար ճեղքելով», օգնության է հասել Վարդան Մամիկոնյանի «շրջապատուած խմբին» և դրան հաջորդած մարտերում նրա հետ միասին նահատակվել է [9, էջ 121]: Սակայն անհասկանալի է, թե ինչի վրա է հիմնվում այս պնդումը: Օրինակ, որտեղից է հայտնի դարձել Հակոբյանին, որ Վահան Արծրունին հայոց հե՛նց կենտրոնի գնդից է օգնության հասել Վարդան

<sup>16</sup> Միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հեռահար գեների կիրառումն այնպիսի ուժգնության հասավ, որ 1942 թվականից Կարմիր բանակի մարտական կանոնադրություններում ամրագրվեց «իրետանային հարձակում» հասկացությունն ու համապատասխան եզրույթը:

Մամիկոնյանին: Այդպիսի տեղեկություն սկզբնաղբյուրում՝ Աբրահամ Խոստովանողի (Թովմա Արծրունու վերաշարադրությամբ) մոտ, առհասարակ չկա: Մինչև «Айвазян, 2016»-ի հրատարակումը այս բացառիկ արժեքավոր դրվագը՝ Վահան Արծրունու ջոկատի գործողությունը, չէր դարձել պատմաազնագիտական վերլուծության առարկա և երբեմն անգամ դիտվել էր որպես Թովմա Արծրունու հորինվածք: «Айвазян, 2016»-ում փուլ առ փուլ վերլուծությամբ առաջին անգամ հիմնավորվել է թե՛ Թովմա Արծրունու շնորհիվ պահպանված տեղեկությունների արժանահավատությունը, և թե՛ այն, որ Վահան Արծրունու գրահակիր (գրահավոր) հեծյալ ջոկատը գտնվել է Հայոց բանակի կենտրոնում: Այդ դիրքից էլ, ճեղքող և խոր հարվածով, այն կարողացել է միանալ ձախ թևում ծանր դրության մեջ հայտնված Վարդան Մամիկոնյանի գործիքին և, այն ամրացնելով, անհրաժեշտ լրացուցիչ ժամանակ ապահովել հայոց հիմնական ուժերի կանոնավոր նահանջի համար [12, էջ 180, 249-251, 305-307, 310, ծնթ. 666]<sup>17</sup>:

#### 8. *Ճակատամարտը «նույնանման փուլերով» դիտարկելու մասին*

Ա.Հ.-ն գրում է. «Ուշագրաւ է, որ անկախ որոշ շեղումներից՝ ճակատամարտը նույնանման փուլերով է դիտարկում նաեւ Արմէն Այվազեանը («Айвазян, 2016», 281-309)» [9, էջ 122, ծնթ. 1]: Բայց չէ՞ որ Ավարայրի ճակատամարտի փուլերը պարզելու համար մեզ պահանջվել է գրել հաստատվոր մի մենագրություն, իսկ քննարկվող հոդվածի հեղինակը պարզապես օգտվել է նրանում մշակված պատրաստի փուլային սխեմայից և եզրակացություններից: Գիտության մեջ այդ ե՞րբվանից է ընդունված դարձել, որ հաջորդ հեղինակը գրի, թե իրեն նախորդողը «նույնանման փուլերով է դիտարկում» քննվող խնդիրը: Արդյոք ավելի ճիշտ չէ՞ր լինի, եթե նա՝ գիտական էթիկայի հայտնի կանոններին համապատասխան, պարզ ասեր, որ համաձայն է նախորդող հեղինակի մանրագնին քննության արդյունքում

առաջարկված ճակատամարտի փուլային սխեմային և նույնպես որդեգրում է այն՝ այսինչ կամ այնինչ շեղումներով, եթե այդպիսիք կան: Ի դեպ, «Айвазян, 2016»-ում մենք հենց այդպես ենք վարվել, օրինակ, Խաղիաղի ճակատամարտը քննելիս. գոհունակությամբ ընդունել ենք Վ. Ն. Խաչատրյանի վերականգնած հիմնական ուրվագիրը, ինչը, սակայն, չի խանգարել մեզ այն լրջորեն վերանայել՝ կատարելով էական ուղղումներ գորքերի թվաքանակի, մարտական դասավորվածության և մի շարք այլ հարցերում [12, էջեր 117-120, 127-138, 121-122, 145-158]:

Ասվածը առավել պարզ կդառնա, եթե նկատենք, որ նախորդող պատմաբանը (տողերիս հեղինակը) հիմնարար ուսումնասիրություն է նվիրել ամբողջ խնդրին՝ 449-451 թթ. հայպարսկական պատերազմին, որի մեջ ավելի քան հարյուր էջը հատկացված է միայն Ավարայրի ճակատամարտի մանրակրկիտ քննությանը [12, էջեր 197-319]: Մինչդեռ նրան հաջորդող հեղինակը (Ա.Հ.-ն) անդրադարձել է միայն Ավարայրի դաշտի տեղորոշման հարցին՝ բուն ճակատամարտը նկարագրելով ընդամենը երեք էջում՝ առանց բավարար հիմնավորումների և փաստարկների [9, էջեր 119-122]:

Նրա բավական ինքնավստահ պնդումը, թե Ավարայրի ճակատամարտը «Айвазян, 2016»-ում ևս դիտարկվել է «նույնանման փուլերով», հիշեցնում է այսպիսի մի ենթադրյալ իրավիճակ. ասես որևէ գիտնականի հիմնարար աշխատությունից կարճ ժամանակ անց (Ա.Հ.-ի համաձայն՝ «Айвазян, 2016»-ը հենց «հիմնարար մենագրություն» է) մեկ այլ հեղինակ հանդես գար հոդվածով, որտեղ՝ առանց աղբյուրի հիշատակման, վերարտադրվեին այդ աշխատության հիմնական դրույթները, իսկ վերջում էլ նշվեր, թե այդ հարցը «նույն գծերով է դիտարկում» նաև նախորդ աշխատության հեղինակը: Գիտության մեջ նման գործելակերպն անընդունելի է:

#### 9. «Ապարհական ջոկատն» ու նրա տեղակայումը

«Հակոբյան, 2017»-ում հրատարակված քարտեզի վրա պարսկական բանակի կազմում նշված է «Ապարհական ջոկատը»: Սակայն նույն հոդվածում այդպիսի անվամբ ջոկատի գոյության մասին որևէ բան չի ասվում: Այնինչ «Ապարհական ջոկատ» կամ «Ապարհացիների ջոկատ» (Апархский отряд) անվանումը պայմանական է և առաջին անգամ տրվել է «Айвазян, 2016»-ում՝ այն համահավաք գործիքին, որը պարսից գլխավոր հրամանատար Մուշկան Նիսալավուրտը կազմավորել էր հատուկ Վարդան Մամիկոնյանին ռազմադաշտում ոչնչացնելու նպատակով: Այս հարցին նվիրել ենք մի ամբողջ ենթագլուխ՝ «Հատուկ նշանակության Ապարհական ջոկատը» («Апархский отряд оо-

<sup>17</sup> «Հակոբյան, 2017»-ում մեջբերվել է նաև Աբրահամ Խոստովանողի վերոհիշյալ հաղորդման հավաստիությունը կասկածի ենթարկող ավանդական տեսակետը (Մ. Դարբինյան-Մելիքյանի շարադրմամբ). «Հատկանշական է, որ Վահան Արծրունու անհավաստի պատմության միակ աղբյուրն է մեզ չհասած Աբրահամ Խոստովանողի Համառոտությունը, որի գոյության մասին հաղորդում է առաջին անգամ և միայն Թով. Արծ[րունի]: Այդ հանգամանքը դարձնում է կասկածելի սույն վկայակոչման ճշմարտությունը» (Թովմա Արծրունի եւ Անանուն. Պատմության տանն Արծրունեաց: Քննական բնագիրը, ծնթ. և առաջ.՝ Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի: Երևան, 2006, էջ 417): Այս կապակցությամբ Ա.Հ.-ն ընդամենը նկատում է, թե «վերջին պնդումը, սակայն, մեզ չափազանց խիստ է թույլ» [9, էջ 119, ծնթ. 6] թերանալով նշել «Айвазян, 2016»-ում սույն հարցը պարզաբանող վերը նշված էջերը՝ փոխարենը ապավինելով միայն «թվալուսն»:

бого назначения») խորագրով, որտեղ մանրամասն բացահայտված են այդ ջոկատի առանձնակի առաջադրանքը, պարսկական բանակի մարտակարգում տեղակայվածությունը՝ կենտրոնի և աջ թևի միջև, ինչպես նաև նրա հետագա մարտական գործողությունները [12, էջեր 246-251, 306-307]:

Մինչև «Այվազյան, 2016»-ի հրապարակումը պատմագիտության մեջ ո՛չ այդպիսի անվանումով ջոկատ էր հայտնի, ո՛չ էլ առավել ևս նշվել են նրա առաջադրանքը, տեղաբաշխումը և հետագա գործողությունները: Ակնհայտ է, որ Ա.Հ.-ն կրկին փոխառել է վերոհիշյալ հետազոտության տվյալները՝ առանց աղբյուրը հիշատակելու:

*10. Ա.Հ.-ի քարտեզում առկա արտագրություններն ու պատճենումները*

«Հակոբյան, 2017»-ում հրապարակված Ավարայրի ճակատամարտի քարտեզում «Այվազյան, 2016»-ի քարտեզից արտագրված և պատճենված են բազմաթիվ հատվածներ, որոնք հարուստ տեղեկույթ են պարունակում: Մասնավորապես, Ա.Հ.-ի քարտեզում հայոց և պարսից բանակների մարտական դասավորությունը գրեթե ամբողջությամբ կրկնօրինակվել է նշված մենագրության՝ Ավարայրի ճակատամարտը երկու փուլով պատկերող գույգ քարտեզներից: Ավելին, այդ հոդվածի հեղինակը առհասարակ չի քննարկել տվյալ ճակատամարտում հակառակորդ կողմերի մարտական դասավորվածության (մարտակարգի) հարցը, մինչդեռ «Այվազյան, 2016»-ում այն վերականգնել ենք մանրակրկիտ քննության արդյունքում և համապատասխանաբար քարտեզագրել ենք՝ Ռ. Թարումյան-Հակոբյանի համակարգչային ձևավորմամբ [12, էջեր 223-281, Գծագրեր (Схема) 3 և 4. հմմտ. դրանց հայերեն տարբերակները՝ սույն նյութին կից՝ Գծագրեր 1 և 2]:

Ահա մի քանի ծանրակշիռ դրվագ, որոնք 2016 թ. հունվարին «Այվազյան, 2016»-ում հրապարակված քարտեզից անցել են 2017 թ. սեպտեմբերին «Հակոբյան, 2017»-ում տպագրված քարտեզի մեջ.

- (ա) թշնամի բանակներն ունեն երկու մարտական գիծ,
- (բ) առաջին գծում կանգնած է հեծելագորը,
- (գ) երկրորդում՝ հետևակը,
- (դ) պարսից երկրորդ գծի՝ հետևակի առջևում տեղաբաշխված են փղերը,
- (ե) «Ապարհական ջոկատը» գտնվում է պարսկական բանակի կենտրոնի և աջ թևի միջև [12, էջեր 247-248],
- (զ) Վարդան Մամիկոնյանի պահեստագորային զորագունդը տեղակայված է Հայոց բանակի կենտրոնի թիկունքում,

(է) Վասակ Սյունու և Արտաշիրի գլխավորած պարսկական պահուստային զնդերն առանձնացված են,

(ը) պարսից բանակի կենտրոնը նահանջում է և դիրքավորվում հայոց ձախ թևի՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորած զորախմբի դեմ,

(թ) Վահան Արծրունու ջոկատը կենտրոնից ճեղքում է պարսկական մարտակարգը և օգնության է հասնում հայոց ձախ թևին, և այլն:

Որպեսզի չշարունակենք թվարկել «Այվազյան, 2016»-ի քարտեզներից քաղված ու «Հակոբյան, 2017»-ում նույնությամբ (տեղանքի ու մի քանի մանր տարբերություններով) վերարտադրված հատվածները, ընթերցողին առաջարկում ենք պարզապես համեմատել սույն նյութին կից հրապարակվող այդ բոլոր քարտեզներն ու դրանց տեղեկույթը:

Պետք է նկատել, որ նշված բոլոր դրվագները «Այվազյան, 2016»-ում հրատարակված քարտեզում ներմուծվել են բացառապես այնտեղ կատարված հանգամանալից վերլուծությունների և ճշտումների հիման վրա: Այս բարդ խնդիրները տքնաջան ու երկարատև քննության արդյունքում լուծելուց հետո՝ դժվար էր ենթադրել, որ դրանց արդյունքները այդքան արագ կվերարտադրվեն, այդ թվում՝ կարտապատկերվեն, մեկ այլ աշխատության մեջ՝ առանց համապատասխան հղումների: Արդարև, «Հակոբյան, 2017»-ի քարտեզը, զգալիորեն պատճենված լինելով «Այվազյան, 2016»-ի քարտեզից, ունի, սակայն, հեղինակային իրավունքի դրոշմ՝ «© Ալեքսան Յակոբյան, 2016», որը, իր հերթին, հարցեր է հարուցում քարտեզի աղբյուրների մատնանշման լիակատար բացակայության վերաբերյալ: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ այս դրոշմով մեկ տարով առաջ է զգվել այդ քարտեզի հրապարակման տարեթիվը՝ այն հավասարեցնելով «Այվազյան, 2016»-ի և դրան կից քարտեզների հրապարակման տարեթվին: Արդյոք սա քննարկվող քարտեզում առկա պատմաազգիտական տեղեկույթի, այդ թվում՝ վերոհիշյալ և այլ վճռորոշ դրվագների բուն աղբյուրի՝ «Այվազյան, 2016»-ի հնարավորինս քողարկման փորձ չէ՞: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն քարտեզի իմաստային բովանդակությանը, այլև ձևավորմանը:

Ա.Հ.-ն ընդգծում է, որ քարտեզը ձևավորել է ինքը՝ «Ռ. Թարումյան-Յակոբյանի սիրալիր օժանդակությամբ» [9, էջ 122, ծնթ. 2]: Մինչդեռ մեկուկես տարով ավելի շուտ լույս տեսած «Այվազյան, 2016» մենագրության քարտեզները ևս ձևավորել էր Ռ. Թարումյան-Հակոբյանը՝ (տողերիս) հեղինակի ձեռագիր նախօրինակ գծագրերի և բացատրագրերի հիման վրա, նրա անմիջական ուղղորդմամբ և համատեղ աշխատանքի արդյունքում: Հետևաբար այդ մենագրությունում

գետեղված քարտեզները պատկանում են աշխատության հեղինակին, ինչն ամրագրված է նաև համապատասխան դրոշմով՝ «© Армен Айвазян. Армяно-персидская война 449–451 гг. Кампании и сражения»: Իսկ Ռ. Թարումյան-Հակոբյանը նշված է որպես քարտեզագիր («Картограф: Рубен Тарумян»)՝ ճակատամարտի գծագրերին համակարգչային ձևավորում տալու և դրանք քարտեզագրային իրական հիմքերի վրա դնելու համար: Ընդ որում, դա նրա ռազմապատմական թեմայով ակադեմիական քարտեզ ձևավորելու առաջին փորձն էր: Ուրախալի է, որ մեզ հետ համատեղ աշխատանքի ընթացքում ձեռք բերված փորձն ու հմտությունները (անգլերեն՝ *know-how*) այժմ արդեն պահանջված են և օգտագործվում են այլուր: Ուստի տվյալ դեպքում գիտական էթիկայի կանոնները Ա.Հ.-ից պահանջում էին հստակ նշել, որ Ավարայրի ճակատամարտի իր ներկայացրած քարտեզում բազմաթիվ կարևոր լուծումներ՝ ինչպես պատմական տեղեկություն մասով (հակառակորդների մարտակարգերը, ներառյալ զորատեսակների դասավորումը, զորաշարժերը և այլն), այնպես էլ ձևավորման առումով, ուղղակիորեն վերարտադրված են նույն ճակատամարտի մասին «Айвазян, 2016»-ում գետեղված և այդ աշխատության արդյունքները խտացված կերպով ներկայացնող երկու քարտեզներից:

Փաստորեն, իր քարտեզում Ավարայրի ճակատամարտի ընթացքը ներկայացնող բազմաթիվ վճռորոշ լուծումներ չնկարագրելով և չհիմնավորելով (որոնք, ինչպես տեսանք, վերցված են «Айвазян, 2016»-ից)՝ Ա.Հ.-ն նույնիսկ չի իրագրել ընթերցողին, թե որտե՞ղ՝ ո՞ր աշխատության մեջ և ո՞ր էջերում կարելի է գտնել համապատասխան բացատրություններն ու հիմնավորումները:

Պատահական չէ, ուրեմն, որ «Հակոբյան, 2017»-ում մասնավոր պատմական հարցով ընդամենը մեկ անգամ է հղում կատարվել «Айвазян, 2016»-ում կատարված քննությանը (այն է՝ անբովանդակ, այդ մասին տե՛ս ստորև՝ Առանձար Ամատունու հեծյալ գնդի հարձակման մասին քննարկումը), այնինչ, ինչպես վերը ցույց տրվեց, պարտադիր հղումներ պետք է արվեին բազմաթիվ դրվագների և հարցերի կապակցությամբ: Քննարկվող հոդվածում պատշաճ հղումների և ծանուցումների հետևողական բացակայությունը, ցավոք, չի կարող որակվել այլ կերպ, քան մտավոր սեփականության նկատմամբ անհարգալից վերաբերմունք:

### Նորահնար գաղափարներ

Ավարայրի ճակատամարտի մեր քննության և վերակառուցման վերոհիշյալ դրույթները կրկնել-յուրացնելու փորձերից զատ՝ «Հակոբյան,

2017»-ում առաջադրվում են նաև մի քանի նորահնար գաղափարներ, որոնք լիովին անտեսում են սկզբնաղբյուրների հաղորդումները, խորթ են այդ դարաշրջանի ռազմական գործին և որևէ կերպ չեն հիմնավորվում հեղինակի կողմից:

#### *Առանձար Ամատունու գնդի գործողությունը*

Եղիշեն հաղորդում է, որ Ավարայրի ճակատամարտի նախօրեին, երբ հայկական և պարսկական բանակներն արդեն հաստատվել էին դաշտային ճամբարներում, Մուշկան Նիսալավուրդ առանձնացնում է մի սովորաթիվ գունդ և ուղարկում մոտակա հայկական գավառներն ավերելու՝ իր բազմահազարանոց զորքի համար սննդամթերք ու կեր հայթայթելու նպատակով: Տեղեկանալով այս մասին՝ Վարդան Մամիկոնյանը առաքում է սեպուհ Առանձար Ամատունու գլխավորած 2000-անոց հեծյալ գունդը, որը հասնում է պարսից այդ գորախմբին և ջախջախում այն՝ կենդանի մնացածներին հետ շարտելով դեպի սասանյան ճամբար<sup>18</sup>: Հաղթանակից հետո Առանձար Ամատունին և նրա հեծյալները վերադառնում են հայոց ճամբար, որտեղ նրանց հաջողությունը նշվում է մեծ տոնախմբությամբ: Ահա Եղիշեի այդ հաղորդումը, որը մեջբերել է նաև Ա.Հ.-ն.

«Եւ [պարսից բանակը] եկեալ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի Չարևանդ գաւառ, և անդէն ի գաւառին գտեղի առեալ նորա՝ բանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրև զքաղաք ամենայն պատրաստութեամբ: Գունդ բազում հատանէր ի գորաց նորա, ասպատակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումս:

Չայն իբրև լուան զօրքն Հայոց, սեպուհ մի յագգէն Ամատունեաց՝ Առանձար անուն ընտրեցին յամենայն զօրականէն... Ել ընդ առաջ նորա հազարօք երկու, հար սատակեաց զբազմութիւն գնդին, և զմնացեալսն ի նոցանէ անդրէն փախստական ի բանակն արկանէր: Եւ ինքն ողջանդամ այսրէն դառնայր, և լինէր տօն ուրախութեան մեծ յաւուրն յայնմիկ զօրացն Հայոց» [2, էջեր 212, 214]:

Եղիշեի այս տեղեկությունները քննելով՝ Վ. Խաչատրյանը արդարացիորեն եզրակացրել էր, որ Առանձար Ամատունու հեծյալ գնդի հարձակմանը ենթարկված պարսկական զորամասը զբաղվել է խարահայթայթմամբ [19, էջ

<sup>18</sup> Պարսից ավարառու այդ գորախումբը պետք է շարժվեր արևմտյան ուղղությամբ՝ դեպի ներկայիս Բաստամ և Վերին ու Ստորին Քուրուլ, որտեղ էլ պարեն և կեր կարող էր գտնել:

129]: «Айвазян, 2016»–ում, բյուզանդական ռազմական տեսության դրույթների վրա հենվելով, առաջադրվում է նաև այն տեսակետը, որ Վարդան Մամիկոնյանը հանձնարարել էր Առանձարին ձեռնարկել այդ անակնկալ գրոհը՝ նպատակ ունենալով գլխավոր ճակատամարտի նախօրեին առավելագույնս բարձրացնել Հայոց բանակի մարտական ոգին: Պատահական չէ, որ հայոց ճամբարում սեպուհ Առանձարի հեծյալ գնդի տեղային նշանակության հաղթանակն ու գրեթե առանց կորուստների վերադարձն ընդհանուր ուրախության առիթ էին դարձել [12, էջեր 212-215]: Սակայն այս ռազմագործողությունը՝ պարսից բանակի մատակարարումը մասնակիորեն խաթարելու և որոշ բարոյահոգեբանական-խորհրդանշական ազդեցություն գործելուց բացի, որևէ այլ նշանակալի ռազմական հետևանք ունենալ չէր կարող:

Ուշագրավ է, որ Ա.Հ.-ն դրականորեն է հիշատակել Առանձար Ամատունու իրականացրած ռազմագործողության վերաբերյալ Վ. Խաչատրյանի և տողերիս հեղինակի քննությունն ու գնահատականները՝ կարճ ծանոթագրելով. «Առանձարի գործողությունների վերլուծությունը տե՛ս Хачатурян 1992, [էջ] 129; Айвазян 2016, [էջ] 212–215» [9, էջ 120, ծնթ. 1]: Սակայն ո՛րն է նշված վերլուծություններին այդքան հաստատականորեն անդրադառնալու իմաստը, եթե դրանք անտեսելով և աղավաղելով Եղիշեի հաղորդած տեղեկությունները՝ հեղինակն առաջադրում է բոլորովին այլ, անհիմն տեսակետ, ըստ որի սեպուհ Առանձար Ամատունու «մոքիլ ջոկատի» (այս անհարկի օտարալեզվախառն բնորոշումը Ա.Հ.-ինն է) գործողության արդյունքում էլ հենց պարսիկները ներքաշվել են «Աբարաբաշիի» իբր Ավարայրի դաշտ, ահավասիկ. «Սահմանային Հերում կիտուող պարսիկներն ու «ուրացողները»... դասական ռազմերթի կարգով շարժուել [են] դեպի Արտաշատ մայրաքաղաք: Իրենց դեմ ուղարկուել է Արտազի տեղի Ամատունիներից Առանձար սեպուհի մոքիլ ջոկատը (2 հազ. հեծեալ), որը մեծ վնասներ է պատճառել մթերք ամբարող (Փուրաժիր) խմբերին, ապա Պարսից բանակն իր յետևից «բերել» վաղօրօք ընտրուած վայրը... Պարսիկներին թոյլ են տուել անցնել Աբարաբաշիի գետանցը, բայց յաջորդ գետանցի դիմաց նրանք տեսել են զինավառ Հայոց զնդերին, ում ողջ տեսքն ասում էր, որ լոկ իրենց յաղթելու դեպքում թշնամին կը շարունակի ճանապարհը՝ առաջ կամ յետ» [9, էջ 120]:

Այս եզրակացությունները ակնհայտորեն հնարովի են: Այս մեկնաբանությամբ ստացվում է, թե Վարդան Մամիկոնյանը ուղարկել է Առանձար Ամատունու 2000-անոց հեծյալ գունդը պարսից վիթխարի բանակի դեմ, որն իբր «դասական ռազմերթի կարգով» շարժվում էր

դեպի Արտաշատ մայրաքաղաք: Մինչդեռ Եղիշեի հստակ հաղորդման համաձայն՝ Առանձարին հրահանգված էր հարձակվել միայն այն մեկ պարսից գնդի վրա, որն անջատվել էր և դուրս էր եկել Ավարայրում տեղակայված պարսկական բանակի դաշտային ճամբարից: Եղիշեն, ինչպես տեսանք, հայտնում է, որ պարսից այդ գունդը ջախջախելուց հետո Առանձարը հետապնդել է նրա մնացորդներին գրեթե մինչև նրանց դաշտային ճամբարը («զմնացեալսն ի նոցանէ անդրէն փախստական ի բանակն արկանէր»), իսկ Ա.Հ.-ն կամայականորեն վերաձևում է պատկերը՝ պնդելով, թե հայոց այդ մասնավոր հաղթանակից հետո ռազմերթով շարժվող պարսկական բանակն իբրև թե ամբողջ կազմով ընկել էր սեպուհ Առանձար Ամատունու հեծյալ գնդի հետևից և, ճանապարհին՝ «Աբարաբաշիի» (իբր՝ Ավարայրի) դաշտում հանկարծակիի գալով, հայտնվել Հայոց բանակի կազմ ու պատրաստ մարտակարգերի առջև: Այսպիսով, աղավաղելով սկզբնաղբյուրի տվյալները՝ հեղինակը շրջանցել է Եղիշեի հաղորդումն ու դրա արդեն իսկ գոյություն ունեցող պատմառազմագիտական վերլուծությունը :

Թվարկենք ևս մի շարք կարևոր պատճառներ, որոնք ի ցույց են դնում վերոնշյալ պնդումների ինքնահնար բնույթը:

*Առաջին.* Հայաստանը սասանյան հրամանատարության համար *terra incognita*՝ անհայտ և անձանոթ տարածք չէր, որպեսզի հնարավոր լիներ այդքան հեշտությամբ պարսից մեծաթիվ բանակը ներքաշել գլխավոր ճակատամարտի մեջ՝ իր համար ծայրաստիճան ոչ շահավետ տեղանքում: Սա առավել ևս վերաբերում է Հայաստանի հարավ-արևելքին, քանի որ III-IV դարերում մղված հայ-պարսկական երկարատև պատերազմներն ու բազմաթիվ սահմանային բախումները գրեթե միշտ ընդգրկում էին հենց այդ սահմանակից շրջանները:

*Երկրորդ.* 449 թվականին պարսից զորքերը արդեն առնվազն մեկ տասնամյակ տեղակայված էին մարզպանական Հայաստանի ռազմավարական նշանակություն ունեցող 16 ամրոցներում, որոնք գտնվում էին Այրարատում, Վասպուրականում, Սյունիքում և Տուրուբերանում [12, էջեր 61–62]: Հետևաբար, պարսից հրամանատարները լավ գիտեին Իրանից Հայաստան տանող բոլոր ճանապարհներն ու դրանց երկայնքով ընկած տեղանքը:

*Երրորդ.* Ա.Հ.-ն ամբողջովին անտեսում է ռազմական և գործակալական հետախուզության առաջնային դերը: Փորձառու Մուշկան Նիսալավուրտը պետք է նախապես հանձնարարած լիներ իր ռազմական հետախույզներին պարզել ինչպես այդ ճանապարհների անցանելիությունն ու անվտանգությունը, այնպես էլ

Հայոց բանակի գտնվելու վայրը: Պարսից հետախուզական թռուցիկ խմբերը և առանձին հետախույզները գործելու էին հայոց թիկունքում ոչ պակաս քան 50–100 կմ խորությամբ: Իսկ բուն ռազմերթի ժամանակ պարսից գլխավոր ուժերի առջևում շարժվող առաջապահ զորագունդն իրենից կիլոմետրերով առաջ էր ուղարկելու (ինչպես հին աշխարհում ընդհանրապես ընդունված էր մեծ բանակների ռազմերթի ժամանակ) հեծելագորային ու հետևակային թեթևաշարժ ջոկատներ, որոնց առջև խնդիր էր դրվելու՝ զբաղեցնել իշխող բարձունքները և ճշտել թշնամու հիմնական ուժերի տեղակայումը: Այսպիսով՝ պարսից հրամանատարությունը նաև այդ եղանակով էր վաղորդ՝ նվազագույնը 10–20 կմ հեռավորությունից տեղեկանալու Հայոց բանակի դիրքավորման մասին:

Ուստի բացառվում է, որ Նիսապուրսն իր ամբողջ բանակով՝ հեծելագորով, հետևակով ու փղագորով, կուրորեն և գլխապատառ հետապնդեր Առանձար Ամատունու 2000-անոց հեծյալ գունդը՝ անսպասելիորեն հայտնվելով Հայոց բանակի մարտական դասավորվածություն ընդունած շարքերի դիմաց, այն էլ՝ այդպիսի նեղ ու կտրտված տեղանքում, որտեղ պարսից զորքերը մարտակարգով ծավալվելու հնարավորությունից իսպառ զրկված էին: **Պետք է նկատի ունենալ, որ 451 թվականի պարսից ներխուժումը Հայաստան ոչ թե անակնկալ և սրբնթաց արշավանք էր, այլ նախապես մանրակրկիտ պլանավորված և առանց ավելորդ շտապողականության իրականացված խոշորածավալ ռազմական գործողություն:**

*Չորրորդ.* պարսից շտաբում բարձրաստիճան խորհրդականների և հրամանատարների կարգավիճակով ծառայում էին Վասակ Մյունին և հայ այլ դավաճան նախարարներ, որոնք, հմուտ զինվորականներ լինելով, քաջատեղյակ էին Հայաստանի ճանապարհներին և տեղանքին: Նրանք ևս իրենց հայ գործակալների միջոցով պետք է նախապես պարզած լինեին Հայոց բանակի զորաշարժերն ու գտնվելու վայրը:

Այսպիսով, Առանձար Ամատունու հեծյալ գնդի միջոցով պարսից բանակը «Աբարաբաշի դաշտ» ներքաշելու մասին «Հակոբյան, 2017»-ում առաջադրված վարկածն անհիմն է. այն հերքվում է ինչպես Եղիշեի հստակ հաղորդումներով, այնպես էլ այդ պահին առկա ռազմական (այդ թվում՝ հետախուզական բնույթի) իրողություններով:

#### *Մտացածին ռազմական գործողություններ*

Պատմական տեղեկություններին հակասող հորինվածք է նաև «Հակոբյան, 2017»-ում առաջ քաշված այն միտքը, թե իբր ճակատամարտի նախընթաց օրը հայոց բանակի ձախ թևը

ռազմական լուրջ գործողություններ է ձեռնարկել «Պարսից զորքի ռազմերթի յետնապահ խմբերի» դեմ: Այս «հայտնագործությունն» անելիս՝ Ա.Հ.-ն վկայակոչում է Եղիշեի հաղորդումը, ըստ որի՝ պարսից բանակը նախամարտական մարտակարգի բերելիս Մուշկան Նիսապուրստը կարգադրել էր Ապարիական ջոկատին դիրքավորվել կենտրոնական զորախմբի աջ կողմում՝ «*և հրամանս պատուիրանի տայր ընդ աջմէ կողմանէ իւրոյ գնդին պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարին*» [2, էջեր 232, 234]<sup>19</sup>: Չակերտներում դրված հատվածն ընդգծելով՝ հեղինակը դրանից անում է անկապ և անհիմն այսպիսի մի եզրակացություն. «Այս վերջին՝ խիստ կարեւոր հատուածն ակնարկում է, որ ճակատամարտի նախորդ օրը հայկական ձախ՝ Խորէն Խորխոռունու թեւը ծրագրի համաձայն հետեւողականօրէն սեղմել է (Տղմուտի արեւելեան ափին իջնող բլրաշարի վրայից) Պարսից զորքի ռազմերթի յետնապահ խմբերին դէպի Աբարաբաշի գետանցի արեւմտեան ափը, ինչով նրանց աջ թեւում («յաջմէ կողմանէ իւրոյ գնդին») յատուկ լարում է ստեղծել» [9, էջ 114, ծնթ. 1]:

Մնում է միայն ապշել, թե ինչպես կարող էր Եղիշեի պարզ հաղորդումը Ապարիական ջոկատի տեղակայման մասին հիմք ծառայել այս հորինվածքի համար: Եղիշեի շարադրանքում խոսք իսկ չկա Ավարայրի ճակատամարտի նախօրյակին հայոց ու պարսից բանակների միջև տեղի ունեցած հարձակումների, բախումների կամ գեթ խոշոր ու սպառնալի տեղաշարժերի մասին: Ընդհակառակը, Եղիշեն բացորոշ հայտնում է, որ հայոց ձախ (պարսից աջ) թևում մարտեր եղել են միայն ճակատամարտի նույն օրը՝ հետևյալ հաջորդականությամբ.

**(ա) հայոց ձախակողմյան զորախմբավորումը անցել է գետը և գրոհել պարսից աջ թևի վրա,**

**(բ) ինչին հաջորդել է պարսից աջ թևի ուժգին և բավականին արդյունավետ հակագրոհ,**

**(գ) դրանից հետո սպարապետ Վարդան Մամիկոնյանն իր ընտիր պահեստագորային զորախմբով միացել է ծանր դրության մեջ հայտնված հայոց ձախ թևին, ջախջախել պարսից աջ թևի առաջին գիծն ու խորացել առաջ:**

Դժվար է բացատրել, թե Եղիշեի նկարագրության այս կուռ դիպաշարը «Հակոբյան, 2017»-ում ինչու և ինչ հիմքով է խառնշտած: Ճակատամարտի տվյալ տեղամասում (հայոց ձախ / պարսից աջ թևում) ծավալված կռիվների ընդարձակ վերլուծությունը՝ Եղիշեի հաղորդում-

<sup>19</sup> Այս հաղորդման վերլուծությունը տե՛ս [12, էջեր 224-225, 246-251]: Նիսապուրստն ինքը գտնվել է պարսից կենտրոնի երկրորդ գծում [12, էջ 301]:

ների պատմաբանասիրական վերծանումներով և ռազմագիտական մեկնաբանություններով հանդերձ, տրված է «Айвазян, 2016»-ում [12, էջ 295-305]: Ա.Հ.-ն, ըստ էության, շրջանցել է թե՛ Եղիշեի վերոհիշյալ պարզ ու հստակ հաղորդումները, թե՛ մեր մենագրության մեջ դրանց մանրագնին վերլուծության արդյունքները: Այսպիսի վերաբերմունքում նշմարվում է արդեն ոչ միայն մեր մենագրությունն անտեսելու կամ հատվածաբար յուրացնելու միտում, այլև Ավարայրի ճակատամարտի ընթացքն ու պատմագիտական խնդիրները խճճելու ակնհայտ ձգտում:

*Դողվեճին պարսից աջ թևի հրամանատար «նշանակելու» անհիմն փորձը*

Մի չփաստարկված «նորամուծություն» էլ արված է քննարկվող հոդվածի քարտեզում: Դազար Փարպեցու հաղորդման համաձայն, Ավարայրի ճակատամարտում պարսկական բանակը գլխավորել են Մուշկան Նիսալավուրտն ու Դողվեճը (Դողովճ) [6, էջ 162]: Այս տեղեկության հիման վրա «Айвазян, 2016»-ում ենթադրվել է, որ վերջինս Նիսալավուրտի տեղակալն էր և միաժամանակ պարսից բանակի կենտրոնի առաջին գիծը զբաղեցրած Մատեան գնդի հրամանատարը [12, էջեր 301-302]: Դա պատճառաբանվել է նրանով, որ քննվող դարաշրջանում զորքերի կենտրոնական խմբավորման հրամանատարները հաճախ էին միաժամանակ գլխավոր հրամանատարի տեղակալ լինում: այդպես էր, օրինակ, նախատեսվում վաղմիջնադարյան բյուզանդական ռազմական տեսության որոշ դրույթներով [12, էջ 272]: Ավարայրի ճակատամարտում Հայոց բանակի կենտրոնը գլխավորող Ներշապուհ Արծրունին, ամենայն հավանականությամբ, Վարդան Մամիկոնյանի տեղակալն էր, ով սպարապետի զոհվելու, վիրավորվելու կամ գերի ընկնելու դեպքում ինքը պիտի ստանձներ ընդհանուր հրամանատարությունը [12, էջեր 272-273]: Չանդրադառնալով մեր առաջադրած այս վարկածին և համապատասխան փաստարկումներին (ինչը հերթական անգամ կարող է վկայել անուշադրության կամ միտումնավոր անտեսման մասին)՝ Ա.Հ.-ն իր քարտեզում Դողվեճին «նշանակել» է պարսից բանակի աջ թևի հրամանատար՝ առանց հոդվածի տեքստում որևէ կերպ հիմնավորելու այդ ընտրությունը (տե՛ս Գծագիր 3): Այս և նման կամայական «լուծումները», ինչպես նաև գիտական մեթոդաբանության և գիտական էթիկայի բազմակի խախտումները լիովին արժեզրկում են «Հակոբյան, 2017» հոդվածը:

**Ավարայրի դաշտը ներկայիս Կարազիադինի դաշտն է**

Վերը շարադրվածից պարզ է, որ Ավարայրի դաշտը Էմամդոլի-Քյանդիյե-Օյսյաի կամ Աբա-

րաբաշի դաշտի հետ նույնացնելու փորձը սնանկ և անհեթեթ է: Ուստի ուժի մեջ է մնում Ավարայրի դաշտի նույնացումը ներկայիս Կարազիադինի դաշտի հետ: Այս եզրակացությունը մանրամասնորեն հիմնավորվել է Հ. Աղաբեկյանի ուսումնասիրության մեջ և զգալիորեն ճշգրտվել ու զարգացվել «Айвазян, 2016»-ում: Ստորև այս տեսակետը լրացվում է ևս մեկ կարևոր փաստարկով:

Եղիշեն Ավարայրի դաշտի անունը հիշատակում է միայն մեկ անգամ՝ իր երկի ավարտին, հետևյալ գեղարվեստական պատկերավոր խոսքի մեջ. «Նովառ և դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկայից լինի, ոչ յանձրևաբեր ամպոց, այլ ի սուրբ և յարիւնարուխ վկայից ցանեալ և ցրուեալ սպիտակոյթին սուրբ ոսկերացն» [2, էջ 380]: Այս նկարագրությունն արժեքավոր է այն առումով, որ մեզ հայտնի է դառնում ճակատամարտի տեղի անվանումը՝ Ավարայրի դաշտ: Ցավոք, անունը միայն բավարար չէ այդ վայրի ճշգրիտ տեղորոշման համար: Այստեղ կարևոր նշանակություն են ստանում Եղիշեի երկու այլ՝ ոչ պակաս արժեքավոր հաղորդումները:

Ինչպես տեսանք, Եղիշեն նշում է, որ պարսից զորքը մտել է հայոց Հեր-և-Չարևանդ գավառ ու հենց այնտեղ էլ ճամբար խփել:

*«Եւ եկեալ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի Չարևանդ գաւառ, և անդէն ի գաւառին գտեղի առեալ նորա՝ բանակ բոլորէր, փոս հաստանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրև զքաղաք ամենայն պատրաստոյթեամբ»* [2, էջ 212, 214]:

Արդ, «Айвазян, 2016»-ում ցույց ենք տվել, որ Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել հենց այն նույն դաշտում, որտեղ գտնվում էր պարսկական դաշտային ճամբարը: Այս հարցում Եղիշեի երկի դիպաշարն ու կառուցվածքն ամբողջովին հստակ են և որևէ կասկած չեն հարուցում [12, էջեր 266-267]: Այսպիսով, Ավարայրի դաշտը գտնվել է Հեր-և-Չարևանդ գավառում: Սակայն, մյուս կողմից, Եղիշեի երկի դիպաշարից նույնքան աներկբա է, որ Հայոց բանակն էլ ճամբարել էր Արտազի դաշտում («...հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու և լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ») [2, էջ 202]) և ճակատամարտը տեղի էր ունեցել հենց այդ դաշտում: Առաջին հայացքից հանելուկային թվացող այս հակասությունն ունի բավական պարզ և տրամաբանական լուծում: Եղիշեի արձանագրած պատմական կոնկրետ պահին՝ 451 թվականի գարնանը, Ավարայրի դաշտը բաժանված էր երկու «գավառների» միջև՝ Տղմուտ գետից հարավ ընկած մասը պատկանում էր Հեր-և-Չարևանդ գավառներին, իսկ հյուսիսային մասը՝ Արտազին:

Այս առումով կարևոր է նկատել, որ Եղիշեի երկում Մեծ Հայքի նահանգներն ու գավառները չեն տարբերակվում այնպիսի հստակությամբ, ինչպիսին առաջարկվում է VII դարում կազմված կամ խմբագրված «Աշխարհացոյցում»: Այսպես, Եղիշեն «գավառ» եզրույթով է նշում աշխարհացոյցյան երկու «նահանգ»՝ Այրարատը («յԱյրարատ գաւառե») և Տայքը («ի ձորագաւառն Տայք») [2, էջեր 160, 256]: Միայն մեկ անգամ է նա կիրառում «նահանգ» եզրույթը՝ «գնահանգն Արտաշատու» վարչական անվան մեջ [2, էջ 158], որն «Աշխարհացոյց»-ում առհասարակ գոյություն չունի: «Աշխարհացոյց»-ում Հեր և Չարևանդ գավառները ներկայացված են որպես տարբեր վարչական միավորներ, իսկ Եղիշեի ժամանակ դրանք, ինչպես տեսանք, կազմել են մեկ միասնական «գավառ»՝ «եկեայ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի Չարևանդ գաւառ, և անդէն ի գաւառին գտեղի առեայ»: Հետևաբար, գոնե 450-451 թվականներին թե՛ Հեր-և-Չարևանդ գավառը, թե՛ Արտազը սահմանային խոշոր նահանգ-կուսակալություններ էին, այլ ոչ թե՛ իրենց աշխարհացոյցյան տարածքային ընդգրկմամբ ու ավանդական իմաստով հայտնի փոքր գավառներ:

Չի բացառվում նաև, որ Եղիշեն և նրա ժամանակակիցները նույն նահանգը, գավառը կամ բնակավայրը կոչել են տարբեր հոմանիշային անուններով, ինչպես պատմության ընթացքում հաճախ է պատահել՝ մինչև իսկ մեր օրերը: Այս կապակցությամբ կարելի է բերել տասնյակ օրինակներ, սակայն այստեղ բավարարվենք մեկով: 1608 թ. Գրիգոր Կամախեցին բացատրում է, որ Հայոց Արարատյան նահանգը («երկիր») պաշտոնապես կոչվել է Չուխուր-Սաադ, սակայն նրա ժամանակներում հայտնի էր Երևան անունով. «...յսամ ամի եկի յերկրէն Արարաթանայ, գոր Մահայթի փոս (=Չուխուր-Սաադ) կոչեն, և այժմ Երևան ասեն» [4, էջ 329]:

Հայտնի է, որ Մեծ Հայքի նահանգների ու գավառների սահմաններն անշարժ չեն եղել ու բազմիցս են ձևափոխումների ենթարկվել և՛ հայոց Արշակունյաց թագավորության գոյության շրջանում, և՛ մանավանդ նրա լուծարումից հետո՝ 428 թվականից ի վեր: Այսպես՝ սասանյան, հռոմեական և բյուզանդական իշխանությունները բազմաթիվ վարչատարածքային փոփոխություններ են իրականացրել Մեծ Հայքի իրենց վերահսկողության տակ հայտնված մասերում [տե՛ս, օրինակ, 13; 20, էջեր 34-37]: Նմանապես, 450 թվականի վերջին, Վասակ Սյունու խռովությունը ճնշելուց և իր իշխանությունը մարգպանական Հայաստանի ողջ տարածքի վրա հաստատելուց հետո [12, էջեր 174-185, 196], սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ ելնելով պատերազմական իրադրության արտակարգ պահանջներից, ինքն էլ կարող էր իրականացրած

լինել վարչատարածքային ռեֆորմներ, հատկապես Պարսկաստանին հարող գավառներում: Հնարավոր է նաև, որ նշված երկու գավառների՝ Հեր-և-Չարևանդի ու Արտազի միջև Ավարայրի դաշտի բաժանումը կատարվել էր ավելի վաղ՝ դեռևս մինչև 428 թվականը:

Ավաճը նշանակում է, որ 449-451 թթ. հայպարսկական պատերազմի մասնակից Եղիշեի հաղորդմամբ, Արտազն ու Հեր-և-Չարևանդ «գավառ»-նահանգները սահմանակցել են միմյանց՝ մասամբ Ավարայրի (ներկայիս Կարազիադինի) դաշտի միջով Տղմուտ (ներկայիս Ալեքսայ) գետի երկայնքով: Այն սակավաթիվ տեղեկությունները, որոնց վրա հենվելով մասնագետները փորձել են Արտազի ու Հեր-և-Չարևանդի միջև այլ գավառներ գտնել (մասնավորապես, Ճուարշ-Ռոտը), գալիս են շատ ավելի ուշ շրջանի՝ VII, X և XIII դարերի աղբյուրներից (համապատասխանաբար՝ Անանիա Ծիրակացի, Թովմա Արծրունի և Վարդան Արևելցի) [7, էջ 83] և որևէ կերպ չեն կարող հիմք լինել V դարի հեղինակ Եղիշեի հաղորդումները հերքելու համար:

Իրականում, արդեն նույն V դարում Արտազի սահմանները կարող էին մի քանի անգամ փոփոխվել՝ տեղի ունեցած խոշոր ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքով. 428 թվականին՝ Արշակունիների հայոց թագավորության անկումից հետո, 450-451 թթ.՝ Մարգպանական Հայաստանի տիրակալ դարձած Վարդան Մամիկոնյանի նախաձեռնությամբ, 451 թվականի վերջում՝ հայպարսկական պատերազմի ավարտից հետո, ինչպես նաև 482-484 թթ.՝ Վահանանց պատերազմի ընթացքում:

Այսպիսով, Ավարայրի մարտադաշտը նույնանում է ներկայիս Կարազիադինի դաշտի հետ, քանի որ աշխարհագրորեն գոյություն չունի որևէ այլ նմանատիպ՝ բավականաչափ մեծ, սարերով շրջափակված և գետով երկու մասի կիսված դաշտ, որը կարող էր բաժանված լինել Հեր-և-Չարևանդի ու Արտազի միջև<sup>20</sup>: Այն Եղիշեի երկում հիշատակվում է ինչպես Հեր-և-Չարևանդում, այնպես էլ սահմանակից Արտազում, չէ՞ որ այդ դաշտի հարավային մասում ճամբարել էր պարսից բանակը, իսկ հյուսիսային մասում՝ Հայոց բանակը: «Դաշտն Արտազու» ասելով Եղիշեն արձանագրել է, որ Վարդանանց մղած զինավոր ճակատամարտի դաշտի առնվազն հյուսիսային մասը տվյալ պատմական

<sup>20</sup> Հ. Աղաբեկյանը միանգամայն ճիշտ էր կռահել, որ ճակատամարտի «դաշտը պետք է գտնվի կամ Հեր-և-Չարևանդի հյուսիսային մասում, կամ էլ Ճուարշ-ռոտում, իսկ քանի որ նշված վայրերում միայն մեկ գետ կա՝ Ալ-չայ գետը, ուստիև այստեղ էլ հենց պետք է լինի Ավարայրի դաշտը» [11, էջ 113]:

պահին ընդգրկված էր Արտագ գավառի կազմում<sup>21</sup>:

**Ամփոփում**

«Հակոբյան, 2017» հոդվածում Ավարայրի դաշտն ու պարսկական բանակի շարժման երթուղին հիմնովին սխալ են տեղորոշված: Հեղինակը չի տիրապետում ռազմական պատմությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ մեթոդաբանական այնպիսի գործիքների, ինչպիսիք են տվյալ ժամանակի ռազմական միտքն ու տեսությունը, գորքերի բացագատման հնարավորությունների վերլուծությունը, տեղանքի քարտեզների գրագետ օգտագործումը, առկա ճանապարհներով գորքի ռազմերթների կազմակերպման պայմանների գնահատումը, դաշտային ճամբարների գործառույթներն ու նշանակությունը, ռազմական հետախուզության դերն ու կարևորությունը, ռազմական ու պատմառազմական տերմինաբանության ճիշտ կիրառումը և այլ համադրելի գործոններ:

Հայոց ռազմական պատմության հարցերում չփաստարկված ենթադրությունները որպես աներկբա եզրակացություններ ներկայացնելը մեզանում լայն տարածում է ստացել [12, էջեր 333 (ծնթ. 711), 365 (ծնթ. 757), 385 (ծնթ. 822), 423 (ծնթ. 917), 435 (ծնթ. 954), 439-440 (ծնթ. 963) և այլն]: Այս երևույթը մասամբ կարելի է բացատրել ռազմական պատմաբանների հայկական «դպրոցի» բացակայությամբ: Մակայն վերը քննված հոդվածի պարագայում գործ ունենք շատ ավելի անսխալ իրավիճակի հետ: Կամայական եզրակացություններից բացի, «Հակոբյան, 2017»-ում գիտական ապարատի ձևական-տեխնիկական պահպանման քողի տակ, խախտված են պատմագիտության և հատկապես


ռազմական պատմագիտության մեթոդաբանական հիմնարար սկզբունքները՝ ներառյալ աղբյուրների ու գրականության հետ աշխատելու բազային կանոններն ու գիտական էթիկան:

Սկսած առնվազն XIX դարի երկրորդ կեսից՝ պատմագիտության մեջ պարտադիր է պատշաճ կերպով հղում կատարել այն հետազոտություններին, որոնցում առաջին անգամ առաջադրվել և հիմնավորվել են այս կամ այն եզրակացություններն ու վարկածները: «Հակոբյան, 2017» հոդվածում այդ հիմնարար սկզբունքի բազմակի խախտումները դժվար է համարել պատահական. դրանք կարելի է բացատրել միայն «Айвазян, 2016» մենագրությունում կատարված մեծածավալ աշխատանքի արդյունքները ստվերելու և մասնակիորեն յուրացնելու հստակ նպատակադրումով:


Այս եզրակացությունը լրացուցիչ հաստատում է ստանում «Հակոբյան, 2017» հոդվածում զետեղված Ավարայրի ճակատամարտի քարտեզ-գծագրի նենգափոխմամբ՝ այն մեկ տարով առաջ գցելով և թվագրելով 2016 թվականով, ինչպես նաև «Айвазян, 2016»-ի համապատասխան քարտեզ-գծագրերից կատարված ուղղակի պատճենումներով: Խնդրին սրություն է հաղորդում նաև այն հանգամանքը, որ «Айвазян, 2016» աշխատությունը ռուսերեն է, հետևաբար առայժմ անհասանելի է բազմաթիվ շահագրգիռ հայ ընթերցողներին, որոնք չեն տիրապետում այդ լեզվին կամ տիրապետում են ոչ բավարար մակարդակով: Արդյունքում, Ա.Հ.-ի հոդվածը կարդացողը կարող է թյուրիմացաբար կարծել, թե հենց նա է «Айвазян, 2016»-ին պատկանող մի շարք վերոհիշյալ պատմագիտական գաղափարների, բացահայտումների և եզրակացությունների իրական հեղինակը, ինչը փաստորեն խեղաթյուրում է տվյալ խնդրի ուսումնասիրման իրական պատմությունը:

Եզրափակենք. «Հակոբյան, 2017»-ը գիտական բարոյականությունը դիտումնավոր խախտող, մեթոդաբանորեն ու բովանդակորեն անարժեք հոդված է: Որպես այդպիսին, այն, խառնաշփոթից բացի, գիտությանը ոչինչ ունի տալու, ուստի՝ ամբողջապես մերժելի և դատապարտելի է:

<sup>21</sup> 449-451 թթ. հայ-պարսկական պատերազմի ու, մասնավորաբար, Ավարայրի ճակատամարտի հարցերի վերաբերյալ Ղազար Փարպեցու տեղեկությունները, ինչպես մենք և այլ հեղինակներ ցույց ենք տվել, ունեն բազմաթիվ անճշտություններ, բացթողումներ և ակնհայտ անմտություններ [տե՛ս, մասնավորապես, 12, էջեր 24-36, 44-45, 152-159, 160 (ծնթ. 347), 213 (ծնթ. 458), 271-272 (ծնթ. 604), 305 (ծնթ. 656), 328 (ծնթ. 699)]: Պարսից բանակի Հայաստան մտնելու հարցերը Ղազարի երկում իրենց հավաստիությամբ մեծապես զիջում են Եղիշեի տվյալներին: Այսպես, օրինակ, ըստ Ղազար Փարպեցու, պարսից բանակը Փայտակարանից ավելի շուտ է հասել Հեր-և-Չարևանդ, ապա և Արտագ, քան Հայոց բանակը՝ Արտաշատից, ինչը լիովին հակասում է Եղիշեի վստահելի շարադրանքին և դրանց մանրամասն վերլուծությանը [12, էջեր 197-216]: Նմանապես անհավանական է Ղազար Փարպեցու այն հաղորդումը, թե իբր Առանձար Ամատունին հարձակվել է (այն է՛ իբր ընդամենը 300 մարտիկների գլուխն անցած) ոչ թե Նիսապոլիսի բանակից անջատված մի գնդի, այլ պարսից մեծաթիվ վերջապահ զորաթևի վրա, ինչը հակասում է ինչպես Եղիշեի հստակ տեղեկություններին, այնպես էլ այդ պահին ստեղծված ռազմական իրադրությանն ու ռազմական տրամաբանությանն առիաստարակ [19, էջ 128; 12, էջ 213 (ծնթ. 458)]: Ավարայրին վերաբերող Ղազարի ևս երեք սխալի մասին տե՛ս [12, էջեր 271-272 (ծնթ. 604), 305 (ծնթ. 656)]:




**Գծագիր 1. Ավարայրի ճակատամարտը. Ա փուլ**




**Գծագիր 2. Ավարայրի ճակատամարտը. Բ փուլ**





Գծագիր 4. Պարսից բանակի՝ Ավարայրի դաշտ մուտք գործելու հնարավոր երթուղիները

Գծագիր 4. Պարսից բանակի՝ Ավարայրի դաշտ մուտք գործելու հնարավոր երթուղիները



Գծագիր 5. Ավարայրի ճակատամարտում հակառակորդ ուժերի քանակական բաշխման

**Օգտագործված գրականության ցանկ**

1. «Ազաթանգեղայ Պատմություն Հայոց»: Քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի (Թիֆլիս, 1909): Աշխարհաբար թարգմ. ու ծանոթ.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի: – Եր. ԵՊՀ հրատ., 1983:
2. **Եղիշէ.** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին: Աշխ. Ե. Տեր-Մինասյանի: – Եր. ԵՊՀ հրատ., 1989:
3. **Թովմա Արծրունի եւ Անանուն.** Պատմություն տանն Արծրունեաց: Քննական բնագիրը, ծնթ. և առաջ.՝ Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի: – Եր. «Մագաղաթ», 2006:
4. «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա: Կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան: – Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
5. **Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Ազգերեան.** Նոր Բառգիրք Հայկազգեան Լեզուի, հ. Ա: Վենետիկ—Ս. Ղազար, 1836:
6. **Ղազար Փարպեցի.** Պատմություն Հայոց: Քննական բնագիրը՝ Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանցի, աշխարհաբար թարգմ.՝ Բ. Ուլուբաբյանի: – Երևան, 1982:
7. **Մարտիրոսյան Հմայակ.** *Ավարայրի նակատամարտի տեղը.* // «Լրաբեր հասարակական գիտությունների», №6, էջ 82-88:
8. **Մերեցկով Կ. Ա.** Ծառայություն ժողովրդին: – Երևան, «Հայաստան» հրատ., 1971:
9. **Յակոբեան Ալեքսան,** Կրկին Արտագ զաւառում Աւարայրի դաշտի տեղորոշման խնդրի մասին. // «Արեւելագիտությունը Հայաստանում. հտ. 3. Հին եւ միջնադարեան Հայաստանը եւ իր հարեւանները (Ժողովածուն նվիրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ծննդեան 90-ամյակին)». – Երևան, 2017, էջ 101-126 (գուգահեռաբար [www.academia.edu](http://www.academia.edu) կայքում «Aleksan Hakobyan» էջում, հրատարակվել է նույն հոդվածի՝ որոշակի մանր տարբերություններ և բազմաթիվ վրիպակներ պարունակող էլեկտրոնային տարբերակը՝ URL: [https://www.academia.edu/34569812/THE\\_LOCALIZATION\\_OF\\_AWARAYR\\_FIELD](https://www.academia.edu/34569812/THE_LOCALIZATION_OF_AWARAYR_FIELD)
10. **Տեր-Պետրոսյան Լ.** Ազաթանգեղոսի աստրական խմբագրությունը. // «Էջմիածին», 1989, Դ—Ե—Չ, էջ 90-99:
11. **Агабекян Г. О.** К вопросу о месте Аварайрского сражения. // «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 91-114.
12. **Айвазян Армен.** Армяно-персидская война 449–451 гг. Кампании и сражения. – Ереван: «Воскан Ереванци», 2016. – 516 с.+илл. (ISBN 978-99930-0-243-7): Գիրքը, մանր սրբագրություններով, վերահրատարակվել է Ս. Պետերբուրգում՝ СПб.: Алетейя, 2017 (ISBN 978-5-906860-73-6):
13. **Арутюнян Б. А.** Административное деление закавказских владений сасанидского Ирана согласно труду Елишэ // Кавказ и Византия, Вып. 1. – Ереван, 1979. с. 19–35.
14. **Дмитриев В. А.** Рецензия на: Айвазян А. Армяно-персидская война 449–451 гг.: Кампании и сражения. Ереван: Воскан Ереванци, 2016. 516 с. // «Метаморфозы истории». 2016. Вып. 8. с. 231-242.
15. **Клаузевиц, Карл фон.** О войне. – Москва: Эксмо, СПб.: Terra Fantastica, 2003.
16. **Мушегян А. В.** Рецензия на книгу: Айвазян А. Армяно-персидская война 449–451 гг.: Кампании и сражения. – Ереван: Воскан Ереванци, 2016. 516 с. // «Parabellum novum», №6 (39). СПб., 2017. с. 153-156.
17. **Мушегян А. В.** Рецензия на книгу: АРМЕН АЙВАЗЯН. Армяно-персидская война 449–451 гг. Кампании и сражения. Ереван. Дом печати «Воскан Ереванци», 2016, 516 с.+илл. // «Историко-филологический журнал», 2017, № 1, с. 191-199.
18. **Рубинчик Ю. А.** Персидско-русский словарь. Т. 1. – Москва: «Русский язык», 1970.
19. **Хачатурян В. Н.** Вопросы военного искусства в книге Егишэ «О Вардане и войне армянской». // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1992, №1, էջ 126–139.
20. **Adontz, Nicholas.** *Armenia in the Period of Justinian: The Political Conditions based on the NAXARAR System.* Translated with partial revisions, a bibliographical note and appendices by Nina G. Garsoian Lisbon: Calouste Gulbenkian Foundation 1970.

Տճանա/Հանձնվել է՝ 25.01.2026  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 01.02.2026  
 Принята/Ընդունվել է՝ 09.02.2026